2005, ՄԱՐՏ Բ, ԹԻՎ 6 (194)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

*«Ես իսկ եմ Յարութիւն եւ կեանք»*

*Յովհ. ԺԱ 25*

*«Ես եկի, զի զկեանս ունիցին, եւ առաւել եւս ունիցին»*

*Յովհ. Ժ 10*

## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

### Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2005 թ. մարտի 27

**Կիրակի՝ մարտի 27-ին, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին տոնախմբեց մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը: Սուրբ եւ Անմահ Պատարագի ընթացքում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական իր պատգամը հղեց հայ ժողովրդին:**

**Սրբազան արարողությանը ներկա էին ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, Ազգային ժողովի պատգամավորներ, նախարարներ, Հայաստանում հավատարմագրված դիվանագետներ, Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, Հոգեւոր գերագույն խորհրդի անդամներ, գիտության, արվեստի եւ մշակույթի գործիչներ, բազմաթիվ հավատացյալներ:**

**Սուրբ Պատարագի ավարտին Վեհարանի հանդիսությունների սրահում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որի ընթացքում Վեհափառ Հայրապետն ամենքին ուղղեց հայրապետական իր շնորհավորանքները Քրիստոսի հրաշափառ Հարության տոնի առիթով:**

*Սիրելի հավատացյալ ժողովուրդ.*

*Այսօր մեր եկեղեցիների Սուրբ Խորաններից աստվածային մեծ շնորհի ավետիսն է հնչում՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց եւ յարութեամբն իւրով մեզ կեանս պարգեւեաց»:*

*Միաշաբաթ էր, խաչելությունից երեք օր անց, երբ հրաշքը եղավ՝ հարություն առավ Քրիստոս: Այգալույսի հետ հարության ու կյանքի խորհուրդը բացվեց աշխարհին: Հավատը շողաց տագնապած ու սրտաբեկ հոգիներին Հիսուսի աշակերտների եւ հետեւորդների, ովքեր իրենց խաչված Վարդապետին գերեզման դնելուց հետո ամեն բան ավարտված էին համարում: Նրանք լսել էին կենարար խոսքը Հիսուսի, ականատես էին եղել, թե ինչպես հիվանդները բժշկվում են, մեռյալները՝ կյանք առնում եւ իրենց սրտի ու հոգու ամենաջինջ զգացումով Վարդապետի անձի մեջ ճանաչել էին Փրկչին, ու այժմ, երբ դատարկ էր Նրա գերեզմանը, երբ հնչել էր հարության հրեշտակածայն ավետիսը, հուսալքված նրանց հոգիներին փայլատակեց իմաստը Տիրոջ խոսքերի. «Ես իսկ եմ Յարութիւն եւ կեանք», «Ես եկի, զի զկեանս ունիցին, եւ առաւել եւս ունիցին»:*

*Հարուցյալ է Քրիստոս: Խաչի վրա մեղքը քավված է, մահվան կապանքների հետ փշրվել են անդարձ հուսահատությունն ու երկյուղը, գերեզմանից կյանքն է ճառագում, եւ փայլում է փրկության ու անմահության հաղթանակած հույսը: Աստված է սքանչելատես փառավորյալ, եւ մարդն է փառավորվում, քանզի Քրիստոս խաչը հանձն առավ եւ հարություն առավ, որ մարդկային մեղքով վնասված կյանքը նորոգվի եւ հաստատվի իր նպատակի, դեպի Աստված իր ճշմարիտ ընթացքի մեջ:*



*Խաղաղ եւ արդար աշխարհի սիրով եկավ Քրիստոս, Աստծո հետ հաշտ աշխարհի, որպեսզի այն, ինչ գործում է մարդը, ինչ ստեղծում է մարդը, ի սեր կյանքի լինի, բարին ու բարիքը լինի: Երկնային Հոր Կամքի առջեւ որդիական հնազանդության կատարյալ օրինակը բերեց Քրիստոս, մարդու բարձրագույն ձգտումը հռչակեց Աստծո նախախնամող, փրկարար Կամքի ընտրությունը:*

*Արդարեւ, սիրելիներ, Աստծո Կամքի ընտրությամբ մարդկությունը պիտի կարողանա մերժել ու բացառել Տեր-Զոր եւ Հոլոքոստ, մերժել ու բացառել Սեպտեմբեր 11 եւ Բեսլան, տեսնել պատերազմներից ու բռնություններից զերծ ճանապարհները եւ գտնել ազգերի միջեւ եղբայրության արդար ու լուսազարդ ուղիները: Հույսն է ապրում այդ ճանապարհներին, կյանքի, առաջընթացի, ապագայի հույսը: Այսօր եւ միշտ մարդու հնարավորությունները, ընտրությունն ու որոշումը ուղղված պիտի լինեն հոգալու աշխարհի ու մարդկանց մասին, ինչպես Արարչի Հայրական խնամքն է արարչագործության հանդեպ: Խաչյալ եւ Հարուցյալ Փրկչի հետ գործակիցներ ենք փրկագործության, որով եւ ունենք կյանք եւ առավել եւս կյանք:*

*Փառք Բարձրյալին, որ շատ ազգերի կողքին մեր ժողովրդին նույնպես պարգեվեց աստվածային փրկարար շնորհի լույսը: Անդարձ հավատաց մեր ժողովուրդը Քրիստոսի հարության զորությանը: Հայ կյանքը հաց ու գինով է թաթախուն, հայոց հողը՝ վանք ու խաչքարով ծաղկուն: Աղոթքն է հայի խոսքը, որ երկինք է բարձրացել Խոր Վիրապի մահվան գուբից, Մաշտոցյան Գրով մատյան դարձել, դարձել Նարեկացու երկնամերձ աղերս ու նահատակների սուրբ վկայություն: Հարության շողակաթ լույսով հաստատված Սուրբ Էջմիածինն է հայության հոգին՝ պատմության մեջ դարից դար, ավերներից ու մահերից վերածնված հոգին: Մեր ժողովուրդը չի տեսել Քրիստոսի դատարկ գերեզմանը, բայց Քրիստոսի հետ բազմիցս տեսել է իր համար փորված գերեզմանների դատարկությունը եւ Քրիստոսի հետ հաղթության փառքի պսակներ հյուսել: Հայ մարդը չի կարող չհավատալ Քրիստոսի հարությանը: Հարության մասին են խոսում մեր պատմությունն ու ներկան: Քրիստոսի հետ Մեծ Եղեռնի գողգոթան անցանք եւ մեր պատմության ամենաողբերգական ժամանակը դարձրեցինք հաղթանակի ժամանակ: Եղեռնահար, արնածոր մեր ժողովուրդը հերոսական մաքառումով ծնունդ տվեց իր նոր պետականությանը: Մոխիրներից հառնեց Հայաստանի Առաջին Հանրապետությունը՝ ի վկայություն մեր ժողովրդի անմեռ ձգտումի հայոց պետականության հարատեւ գոյության:*

*Հարուցյալ է Քրիստոս, հարուցյալ է ազգս հայոց: Եվ Լուսավորչի Կանթեղի լույսն է մեր ճանապարհը, հավատով անմար, հավատով պայծառ, հավատով տեսանելի լույսը, որ պիտի առաջնորդի ազատ, միացյալ նոր կյանքը մեր Մայր Հայրենիքի ու հայ Սփյուռքի: Մեր հայրերի հավատավոր օրինակով այսօր էլ պիտի հաղթահարենք դժվարությունները Հայաստանի եւ Արցախի, ազգային-եկեղեցական մեր կյանքի առջեւ ծառացած բոլոր խնդիրները:*

*Սիրելի բարեպաշտ ժողովուրդ, Հարուցյալ Քրիստոս երբ հայտնվեց Իր աշակերտներին, նրանց տվեց նրանց, ովքեր առանց տեսնելու կհավատան Իր Հարությանը: Երանին մեզ է ուղղված: Զատիկ է այսօր, նոր կյանքի արշալույս, աստվածամերձ կյանքի հրավեր՝ անցավոր ժամանակի մեջ, նյութականից դուրս տեսնել Աստծո նախախնամող սերը, հավատալ Հիսուսի հարուցյալ զորությանը եւ փրկչական առաքելությանը: Հավատն է զատկական տոնի պատգամը: Հավատքով է սկիզբ առնում Փրկչի հետ մեր հարուցյալ կյանքը, հավատքով զորանում ու արգասավորվում: Հավատքով անձնվիրումը դառնում է բնական, մերձավորի հանդեպ սերը՝ երջանկության եւ ուրախության ակունք: Հարության խորախորհուրդ հրաշքն է այս, միշտ դեպի վեր, դեպի երկնայինը, ճշմարիտը, արդարն ու բարին:*

*Փրկչի Հարության հրաշածին շողերից թող ջերմանան այսօր մեր հոգիները, լույս առնեն առավել ու հույս եւ հավատով զորանան: Մեր հավատը թող գծի մարդկային մեր կատարելության ճանապարհը եւ լուսավորի մեր Հայրենիքի, մեր ժողովրդի ու Եկեղեցու վերածնված նոր կյանքի ուղին: Ժողովուրդ հայոց, հավատիդ լույսով կյանքդ դարձրու աստվածփառաբանություն, որ գործերիդ մեջ սրտիդ զարկը տրոփի, սերդ շողա, արդարը, ճշմարիտը, բարին ընտրելու կամքդ հաղթանակի: Այնտեղ, ուր Տերն է, կենդանի ջրերի գետեր պիտի բխեն՝ համաձայն Աստծո եւ մեր Տիրոջ ու Փրկչի կենսապարգեւ Կամքի: Թող մեր միջոցով հրաշագործ Փրկիչ Տերը բժշկի, ամոքի ու սփոփի, շենացնի ու կյանք պարգեւի, առավել կյանք՝ մեր հոգին, խաղաղության, ազատության, արդարության մեր երազներին ու իղձերին:*

*Շարունակությունը՝ էջ 2*



# Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ...

*Սկիզբը՝ էջ 1*

*Հարության սուրբ ավետիսով ողջունում ենք ձեզ, սիրելի հավատացյալներ ի հայրենիս եւ ի սփյուռս, օրհնում ենք ձեր կյանքն ու բարի գործերը: Թող հարության շնորհները առատորեն իջնեն ձեր հոգիներին, զորացնեն ձեր հավատը, ավելի լույս տան ձեր մտքին, ավելի ուժ՝ ձեր բազուկներին, ավելի սեր՝ ձեր սրտերին: Միրեցեք միմյանց, մեր Սուրբ Եկեղեցին ու Սուրբ Հայրենիքը՝ Հայաստանն ու Արցախը:*

*Հարության խնդությամբ ողջույն ենք հղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների Գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆյանին եւ մեր Եկեղեցու ուխտապահ ողջ հոգեւոր դասին:*

*Ի Քրիստոս սիրով ողջունում ենք Քույր Եկեղեցիների հոգեւոր Պետերին՝ հայցելով Փրկչի առատ շնորհները Տիրախնամ նրանց հոտին:*

*Մեր ողջույնն ենք բերում Հայաստանի Հանրապետության Նախագահ Տիար Ռոբերտ Քոչարյանին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահ Տիար Արկադի Ղուկասյանին, հայոց պետական ողջ ավագանուն, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներին ու ներկայացուցիչներին:*

*Զատկական այս սուրբ առավոտ Հարուցյալ մեր Փրկչի Իջման Սուրբ Սեղանի առջեւ աղոթք ենք բարձրացնում, որ Աստված հայոց հողը միշտ ազատ ու խաղաղ պահպանի, բարիքով ու ծաղկունքով լեցնի: Հայցում ենք, որ Տերը մեր Մայր Հայրենիքում եւ աշխարհի բոլոր կողմերում մեր ժողովրդին պահպանի մեկ ու անբաժան, սիրով միաբան, մեր սուրբ հավատքով, մեր արժեքներով ու ժառանգությամբ, մեր արդար իղձերի տեսիլքներով:*

*Թող Հարուցյալ Քրիստոս իր ողորմության ու շնորհի ներքո պահպանի աշխարհը համայն անվրդով ու խաղաղ, ազգերը՝ եղբայրության մեջ, մարդկանց՝ սիրով, հույսով ու հավատով: Ամեն:*

*Քրիստոս յարեաւ ի մեռելոց*

*Օրհնեալ է Յարութիւնը Քրիստոսի:*

## ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

## Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

15 մարտի

### Հայաստանում Սլովակիայի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպանին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Սլովակիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Աուգուստին Չիսարին:

Վեհափառ Հայրապետն իր բարեմաղթանքներն ուղղեց նորանշանակ դեսպանին եւ արդյունաշատ ծառայություն ցանկացավ նոր պաշտոնում: Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց, որ Հայաստանի եւ Սլովակիայի միջեւ հարաբերությունները նոր զարգացում եւ վերելք են ապրում՝ նշելով նաեւ, որ Սլովակիայի հայ համայնքը նույնպես կարեւոր



դերակատարություն է իրականացնում երկու պետությունների ու ժողովուրդների կապերի սերտացման ու ամրապնդման գործում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ի դեմս դեսպանի իր շնորհակալությունն ու գնահատանքը հայտնեց Սլովակիայի իշխանություններին ու ժողովրդին՝ անցած տարվա նոյեմբերին Սլովակիայի խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման համար:

Իր հերթին դեսպանը, շնորհակալություն հայտնելով այցի հնարավորության եւ ջերմ ընդունելության համար, հավաստիացրեց, որ ամենը պիտի ի գործ դնի՝ երկու ժողովուրդների բարեկամությունն առավել ամրապնդելու: Որպես պատմաբան՝ նշեց նաեւ, որ Հայ Եկեղեցին մեծ մշակույթ է պարգեւել ոչ միայն հայ ժողովրդին, այլեւ ողջ աշխարհին:

Հանդիպմանը Հայոց Հայրապետը պրն. Չիսարին ներկայացրեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու առաքելությունը, ներկայիս գործունեությունն ու մարտահրավերները: Խոսվեց նաեւ երկու երկրներում տիրող կրոնական իրավիճակի մասին:

16 մարտի

### Հայաստանի եւ Արցախի շուրջ 500 երիտասարդների

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Հայաստանի եւ Արցախի տարբեր շրջաններից՝ զանազան ոլորտներում առանձնահատուկ հաջողություններ արձանագրած շուրջ 500 երիտասարդների: Հանդիպումը կազմակերպվել էր ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության երիտասարդական քաղաքականության վարչության նախաձեռնությամբ:

Հանդիպման սկզբին երիտասարդների անունից Ամենայն Հայոց Հայրապետին ողջունեց եւ ընդունելության համար շնորհակալություն հայտնեց ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի փոխնախարար Լիլիթ Ասատրյանը՝ կարեւորելով Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դերը երիտասարդության կյանքում: Ապա երիտասարդության անունից պատրաստակամություն հայտնեց գործուն մասնակցություն բերել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կրթական, սոցիալական, մշակութային ծրագրերին:

Ամենայն Հայոց Հայրապետը, իր գնահատանքը հայտնելով ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարին եւ նախարարության անձնակազմին՝ գեղեցիկ այս նախաձեռնության համար, գոհունակություն հայտնեց ներկաների համձնառու ոգու եւ պատրաստակամության համար: Վեհափառ Հայրապետը գոհաբանական աղոթքով ու օրհնությամբ իր բարեմաղթանքներն ուղղեց երիտասարդությանը: «Այս այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին խրախույսի, ոգեւորության եւ ներշնչանքի մի նոր առիթ պիտի լինի ինչպես ձեր, այնպես եւ մեզ համար»,- մասնավորաբար ասաց Նորին Սրբությունը՝ իր գնահատանքը հայտնելով արդեն երիտասարդ տարիքում ակնառու հաջողություններ արձանագրած երիտասարդներին, հորդորեց նրանց ապրել ազգային շահերի հստակ գիտակցությամբ, որով եւ երաշխավորված պետք լինի հայ ժողովրդի ընթացքը դեպի դարեր:

Նորին Սրբությունն անդրադարձավ նաեւ եկեղեցու եւ ազգի առջեւ ծառացած մարտահրավերներին: Հանդիպման ընթացքում երիտասարդները հարցումներ ուղղեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ եկեղեցու գործունեության, Ամենայն Հայոց եւ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունների միջեւ փոխհարաբերությունների, Եղեռնի 90-ամյա տարելիցին եւ Հայոց գրերի գյուտի 1600-ամյակին նվիրված միջոցառումների, ինչպես նաեւ ազգային ու եկեղեցական կյանքում առկա խնդիրների մասին:

18 մարտի

### Բելառուսի Հանրապետության Ազգային ժողովի Ներկայացուցիչների պալատի նախագահին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Բելառուսի Հանրապետության Ազգային ժողովի Ներկայացուցիչների պալատի նախագահ Վլադիմիր Կոնոպլյովին եւ նրա գլխավորած պատվիրակությանը՝ ԱԺ սոցիալական, առողջապահության եւ բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Գագիկ Մխեյանի ուղեկցությամբ:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց հայ եւ բելառուս ժողովուրդների օրեցօր ամրապնդվող բարեկամության, ինչպես նաեւ երկու պետությունների միջեւ ձեւավորված արդյունավետ համագործակցության համար՝ մաղթելով, որ նման փոխայցելություններով առավել ամրապնդվեն երկու պետությունների եւ ժողովուրդների միջեւ առկա ջերմ եւ սերտ հարաբերությունները: Վեհափառ Հայրապետն իր շնորհակալությունն ու գնահատանքը հայտնեց նաեւ Բելառուսի իշխանություններին՝ հայ համայնքի հանդեպ ունեցած հոգածու վերաբերմունքի համար:



Հանդիպման ընթացքում անդրադարձ եղավ նաեւ երկու երկրներում առկա կրոնական իրավիճակին, կրթական, քրիստոնեական դաստիարակության եւ սոցիալական ոլորտներում երկու Եկեղեցիների գործունեությանը, ինչպես նաեւ եկեղեցի-պետություն հարաբերություններին:

Նորին Սրբությունն իր ողջույններն ու բարեմաղթանքները հղեց Մինսկի եւ Սլուցկի Միտրոպոլիտ Ֆիլարետին:

25 մարտի

### ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինին



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունեց ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինին՝ ՌԴ նախագահի խորհրդական Սերգեյ Պրիխոդկոյի, ՀՀ-ում Ռուսաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Անատոլի Դրյուկովի եւ Ռուսաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Արմեն Սմբատյանի ուղեկցությամբ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ողջունելով ՌԴ նախագահի անդրանիկ այցը հայոց նվիրական հոգեւոր կենտրոն, անդրադարձավ հայ եւ ռուս ժողովուրդների դարավոր ջերմ եղբայրական կապերին: *«Սա պատմական այցելություն է, որ պիտի արձանագրվի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տարեգրության մեջ՝ որպես մի նոր վկայություն մեր ժողովուրդների դարավոր բարեկամության, որի ակունքներում կանգնած են նաեւ մեր երկու Եկեղեցիները: ...Ուրախ ենք, որ այդ բարեկամության ավանդույթներն այսօր նույնպես շարունակվում են բոլոր ոլորտներում՝ մեր ժողովուրդներին հույսով եւ հավատով լցնելով հանդեպ մեր կյանքի նոր ժամանակները»*,- մասնավորաբար ասաց Նորին Սրբությունն իր խոսքում: Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունն ու գնահատանքը հայտնեց ՌԴ նախագահին՝ Ռուսաստանի հասարակական կյանքի բարեփոխումների ընթացքում հոգեւոր արժեքների դերն ու նշանակությունը մեծապես կարեւորելու համար:

Նորին Սրբությունը նաեւ շնորհակալություն հայտնեց պրն. Պուտինին հայ ժողովրդի զավակների հանդեպ ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի համար, որի շնորհիվ Ռուսաստանի օրհնյալ հողում բնակվող հայորդիներն ապրում են իրենց ազգային արժեքներով ու ավանդույթներով:

Շնորհակալություն հայտնելով ջերմ խոսքերի համար՝ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինն ուրախություն հայտնեց հանդիպման, ինչպես նաեւ հոգեւոր ոլորտում երկու երկրների փոխգործակցության քննարկման հնարավորության համար: Իր խոսքում ՌԴ նախագահը նշեց, որ երկու ժողովուրդների միջեւ առկա հարաբերությունները հոգեւոր հիմք ունեն, եւ անդրադարձավ Ռուս Ուղղափառ եւ Հայ Առաքելական Եկեղեցիների միջեւ դարերի ընթացքում ձեւավորված եւ այսօր էլ շարունակվող ջերմ հարաբերություններին: Նա ընդգծեց նաեւ Ամենայն Հայոց Հայրապետի եւ Հայ Եկեղեցու կարեւոր ներդրումն ու դերը ինչպես միջպետական հարաբերությունների զարգացման, այնպես էլ Կովկասում խաղաղության հաստատման գործում:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետն ու Վլադիմիր Պուտինն այցելեցին Վեհարանի թանգարան, ապա՝ Մայր տաճար, ուր Հայոց Հայրապետն աղոթք բարձրացրեց առ Աստված հայ եւ ռուս ժողովուրդների բարեկամության անսասանության եւ երկու երկրների առաջընթացի ու բարօրության համար:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանը եւ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպս. Խաչատրյանը:

Տես՝ էջ 3

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԽԱՉԻԿ Ա ԱՐՇԱՐՈՒՆԻ

## (971/973 - 992)



*Սկիզբը՝ թիվ 4, 5*

Ինչպես վերն ասվեց, Խաչիկ Արշարունին նամակ ուղարկեց նաեւ Մելիտենեի միտրոպոլիտին: Ճիշտ է, այն գրվել էր Կամրջաձորցու կողմից, սակայն, անտարակույս, խմբագրել էր կաթողիկոսը եւ իր անունից էլ ուղարկել: Այս նամակն ավելի իմաստասիրական բնույթ ուներ եւ գիտական տեսակետից լավ խմբագրված էր: Սկզբում բերվում է ստացած նամակի բովանդակությունը, որտեղ հայերից պահանջվում էր հեռանալ մոլորությունից, չհետեւել Դեոսկորոսին, չհարել քաղկեդոնականությանը: Բանն այնտեղ էր հասել, որ միտրոպոլիտը Հայոց կաթողիկոսից պահանջում էր ապաշխարությամբ ու զղջմամբ դիմել կայսրին եւ Կոստանդնուպոլսի պատրիարքին՝ միանալով սուրբ հավատին, այսինքն՝ քաղկեդոնականությանը:

Հայոց կաթողիկոսի պատասխանը շատ հստակ է: Նրա խոսքերով՝ Թադեոս միտրոպոլիտի հրավերն ուշացել է, քանի որ իրենք վաղուց արդեն ճիշտ ուղու վրա են՝ հիմնված Գրիգոր Լուսավորչի, տիեզերական երեք ժողովների եւ



հին հայրապետների կողմից, որոնցից 27-ին նշում է հականեհանվանե: Հայոց կաթողիկոսը պահանջում է, որ դրանց բոլորին օտար հայտարարեն եւ նոր միայն հայերին մեղադրեն: Նշվում է, որ հինգ դար է, որ բաժանումը տեղի է ունեցել, սակայն հայերը միշտ պաշտպանել են իրենց ուղղությունը եւ դրանից հրաժարվելու միտք չունեն: Մեկ առ մեկ անդրադառնալով Թեոդորոսի պատճառաբանություններին՝ նա մանրախույզ ձեւով դրանք հերքում է՝ հենվելով նույնիսկ իմաստասիրական սկզբունքների վրա: Հիմնավոր կերպով ցույց է տալիս քաղկեդոնականների «երկու բնութիւն, եւ անձն եւ դէմ մի» բանաձեւի ողջ խոցելիությունը: Մերժելով Եվտիքեսի վարդապետությունը՝ նա չի ընդունում նաեւ Դեոսկորոսինը՝ ասելով. «մեզ չէ ինչ փոյթ, վասնզի քո է»: Շարունակելով իր միտքը զարգացնել՝ Խաչիկ կաթողիկոսը նշում է, որ չնայած հայերի՝ տարբեր ազգերի կողմից հալածվելուն՝ նրանք երբեք չեն լքել ճիշտ հավատը: Հայերին դավանության խնդրում ձայնակից են, ասում է նա, Աղվանքը, Լփինքը, Կասպքը, Ճիղբքը, Ասորիքը, Եգիպտացիք, Եթովպացիք, Արաբացիք եւ Հնդիկք, ուստի խորհուրդ է տալիս պահպանել սիրո խաղաղության բարեկամությունը հայերի հետ, ինչպես հայ հոգեւորականներն են նրա նկատմամբ եւ ավելին չպահանջել հայ կղերից: Եթե հավատանք Մատթեոս Ուռհայեցուն, Հայոց կաթողիկոսի նամակը մեծարվեց Թեոդորոսի կողմից եւ հաճելի եղավ լսողներին, սակայն իրականում նամակի հետեւանքների մասին ոչինչ հայտնի չէ, իսկ պատմիչի հաղորդումը պարզապես անհավանական է: Հայոց կաթողիկոսի պատասխան նամակները Սեբաստիայի եւ Մելիտենեի միտրոպոլիտներին տարբեր էին ոճով եւ աստվածաբանական հիմնավորումներով, որը պայմանավորված էր վերջիններիս վարքագծով: Միանգամայն իրավացի է Մ. Օրմանյանը, երբ նշում է, որ Մելիտենեի միտրոպոլիտը ձգտել է «աւելի գիտնականօրէն... ազդեցութիւն գործել, մինչ Սեբաստացին յայտնի բռնութեանց դիմած էր»:

Խաչիկ կաթողիկոսը քայլեր ձեռնարկեց՝ պաշտպանելու համար բյուզանդական Հայաստանում գտնվող Հայ Առաքելական Եկեղեցու հետեւորդներին: Այս կապակցությամբ նա եպիսկոպոսներ ձեռնադրեց, որոնք իրենց ձեռքի տակ քահանաներ ունենալով՝ մեծապես նպաստեցին Հայոց Եկեղեցու դիրքերի ամրապնդմանը: Հայ եպիսկոպոսներ կային Ասորիքի Անտիոքում, Կիլիկիայի Տարսոնում, Սուլինդայում (հիմա՝ Սելինունդիա, այսինքն՝ Տրայանուպոլիս Իսավրիայում), ինչպես նաեւ բազմաթիվ հայկական բյուզանդահպատակ գավառներում: Եղե՞լ է նման քաղաքականություն մինչեւ Խաչիկ կաթողիկոսը, հայտնի չէ, թեպետ բնավ չի բացառվում: Ըստ երեւույթին՝ Խաչիկ կաթողիկոսն էր, որ դրան լայն ճանապարհ տվեց:

Հայոց կաթողիկոսի մյուս կարեւոր ձեռնարկը եղավ Արգինայի հայրապետանոցում մատենադարան հիմնելը, որի չափի եւ ծավալի մասին պատմությունը տեղեկություններ չի պահպանել: Նրա օրոք մեծապես աճեց ուսումնական վարդապետների թիվը, որը շատ կարեւոր էր Հայոց Եկեղեցու վարդապետությունը ջատագովելու եւ քաղկեդոնական Եկեղեցուն հավուր պատշաճի պատասխանելու գործում:

Խաչիկ կաթողիկոսի հովվապետության շրջանում ուժեղացավ Կարսի թագավորությունը, որտեղ Մուշեղից հետո իշխում էր Աբասը, որը երիտասարդ ժամանակ կայտառ անձ էր եւ անհաղորդ հոգեւոր գործերին, սակայն թագավորական գահին բազմելով՝ իրեն դրսեւորեց որպես հանճարով լի ու իմաստուն եւ բարեգործությունների հետամուտ անձնավորություն: Նա հատկապես հոգ տարավ բանակին, որը թագավորի կողմից զգեստավորվեց կարմիր գույնի զինվորական հանդերձով, եւ իր թագավորության մեջ իսպառ վերացրեց ավազակությունն ու մարդասպանությունը, որոնք այնքան հատուկ էին Վանանդի բնակչությանը: Հայտնաբերված գողերը տեղն ու տեղը մահապատժի էին ենթարկվում:

Թագավորը նախանձախնդիր էր հոգեւոր հարցերում եւ չորեքշաբթի, ուրբաթ եւ շաբաթ օրերին բավարարվում էր միայն հացով եւ բանջարեղենով՝ հրաժարվելով «ի կթեղինաց ինչ եւ... ի ձկանց» ճաշակել: Իր այդ վարքով նա ազդում էր իշխանների եւ ազատների վրա, որոնք որովայնամոլությամբ ապականում էին պահոց օրերը:

Աբասի շինարարական գործերից եղավ մի հոյակապ վանքի կառուցումը Արշարունիք գավառի Շիրիմ կոչված վայրում (թերեւս Կաղզվանի Սելիմ կոչված գյուղում), որի վանահայր դարձավ Մովսես վարդապետը: Վերջինիս հետ էին Հովհաննես եւ Յամզիքոս եղբայրները, որոնք մեծ հռչակ բերեցին վանքին եւ միեւնույն տարվա մեջ՝ 1002-ին, վախճանվեցին: Թրինի վանքը դարձավ Աբասի մոր հոգածության առարկան, որը Փառիսոսի թագավոր Սենեքերիմի քույրն էր: Նա ինքն էլ նույն վանքում կրոնավորեց: Դա, ըստ երեւույթին, կուսանաց անապատ էր, որոնց թիվը շատ չէր Հայաստանում: Վանքի կույսերից հիշատակվում են Մամքանը եւ Ռաչուքանը, որոնք Լոռիում թագավորություն հիմնած Սմբատ Բ-ի եղբայր Գուրգենի սերնդից էին:

Անիի թագավորությունն այս շրջանում ընդհանուր առմամբ խաղաղություն էր վայելում, սակայն Սմբատ Բ-ի կյանքի վերջին շրջանում անհանգիստ օրեր ապրեց: Բյուզանդական Վասիլ (Բարսեղ) կայսեր դեմ ապստամբեց Վարդ Սկլերոսը, որին աջակցեցին հայերը եւ սարակինոսները (արաբները): Նրա դեմ ուղարկված Վարդ Փոկաս զորավարը վերջում ինքն էլ ապստամբության դրոշ բարձրացրեց: Տայքի կյուրապաղատ Դավիթն աջակցեց Վասիլ Բին, որի արդյունքում խիստ ընդարձակեց իր տիրույթները եւ անգամ թագավոր հորջորջվեց: Որպես պատիժ՝ Բարսեղ-Վասիլ կայսրը բազմաթիվ հայկական զորագնդեր ուղարկեց Բուլղարիայի դեմ պատերազմելու, որոնցից շատերն անցնում էին հակառակորդի կողմը: Անցնողների մեջ էին դերջանցի Կոմսաձագ եղբայրները՝ Սամվելը եւ Մանվելը, որոնցից առաջինը հետո դարձավ Բուլղարիայի թագավոր:

Աբլհաճ Ռավվադյանը՝ Ատրպատականի տիրակալը, արշավանք ձեռնարկեց Սմբատ Բ-ի թագավորության դեմ, եւ վերջինս մեծ դժվարությամբ կարողացավ թշնամուն ետ ուղարկել՝ մեծամեծ նվերներ տալով: Աբլհաճը հարձակվեց նաեւ Վասպուրականի թագավորության վրա՝ գրգռվելով Հերի ամիրայից, սակայն նրա անակնկալ մահը Վասպուրականի թագավորությունը փրկեց այդ մեծ վտանգից: Դրանից օգտվեց Գողթնի ամիրա Աբուտլուփը, որը ետ վերադարձրեց իր կորսված իշխանությունը, գրավեց Դվինը եւ հաշտություն կնքեց Սմբատ Բ-ի հետ:

Խաչիկ կաթողիկոսը հաշտության բանակցություններում միջնորդ հանդես եկավ: Սակայն Սմբատ Բ-ի իշխանությանը հաշված օրեր էին մնում: Նա սկզբում իր եղբայրներ Գագիկին ու Գուրգենին տիրույթներ էր հատկացրել Տաշիր եւ Գուգարք երկրամասերում, սակայն իր խոսքը դրժելով՝ նա սկսեց հալածել Գագիկին: Պատմիչները մեղադրում են թագավորին նաեւ Աբուտլուփի հետ դաշինքը դրժելու եւ նրա թշնամի Սալար ամիրային օգնական գնդեր ուղարկելու մեջ՝ չնայած Աբուտլուփը հարգել էր հաշտության պայմանագիրը: Ծանր մեղադրանքներից մեկն էլ այն էր, որ նա իր քրոջ աղջկա հետ էր խառնակում: Վերջինս մահացավ, եւ Ասողիկի հաղորդմամբ՝ սիրո ցավից Սմբատն էլ իր մահկանացուն կնքեց: Այդ օրերին, անհայտ պայմաններում, Անիի թագավորական համբարանոցում հրկիզվեցին խոտի դեզերը, եւ թագավորը, լուր առնելով, թե նույն օրը եկեղեցում մեկը, բուրվառի միջից կրակ առնելով, գոռացել է, թե այրելու է թագավորի համբարանոցը, առանց քննություն կատարելու՝ այդ մարդուն կուրացնել եւ ողջակիզել տվեց, չնայած վերջինս ցնորվածի մեկն էր: Անապատական կրոնավորները նրա դին հողին են հանձնում, սակայն թագավորը կարգադրում է դին գերեզմանից հանել:

Շարունակությունը՝ էջ 7

## ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ

# ՔԱՐՈԶ (ՄԵՌԵԼՆԵՐԻ) ՀԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*Սկիզբը՝ թիվ 5*

Այժմ, ինչպես խոստացանք, խոսենք հասարակաց հարության մասին: Այստեղ երեք բան կա մեր առջեւ. նախ՝ վկայությամբ հաստատել մեռելների հարությունը, երկրորդ՝ ցույց տալ հերձվածների վտանգավորությունը, երրորդ՝ փոքր-ինչ խոսել, թե ինչպիսին է լինելու հարությունը, որով եւ կավարտենք մեր խոսքը: Պետք է իմանալ, որ մեռելների հարությունը հաստատվում է բազում վկայություններով. նախ այսպես՝ եթե կա մարդկային արդարություն, կա եւ Աստծո արդարություն: Եթե կա քաղաքական արդարություն, որով պատժում են չարերին եւ պատվում արդարներին, ապա ուրեմն կա նաեւ Աստծո արդարություն, իսկ արդարության գործն է արժանապես հատուցումը, ապա ուրեմն կա այլ կյանք, որում պիտի հատուցվի մեղքով հաչողածներին եւ նրանց, ովքեր վտանգվում են այս կյանքում: Սակայն եթե մեռելները հարություն չառնեն, նրանց չի հատուցվի, ուրեմն կա՛ մեռելների հարություն: Երկրորդ՝ որովհետեւ մարդու հոգին անմահ է. սա ցույց տանք երկու կերպով. նախ՝ ըստ փիլիսոփայի՝ հոգին ինքնաշարժ է, ինքնաշարժը մշտաշարժ է, մշտաշարժն անմահ է: Դարձյալ՝ ամեն մի ապականություն ներհակներից է [առաջ գալիս], ինչպես ջերմությունից ու ցրտից. թեպետ մարմինն էությամբ ներհակների ընդունարան է, իսկ բանական հոգին էությամբ աններհակ է, ուրեմն՝ անմահ եւ անապական է: Եվ որովհետեւ հոգին ու մարմինը միասին են գործում բարիք կամ չարիք, ապա ուրեմն կա՛ նաեւ մարմնի հարություն, որպեսզի նրանց միասին հատուցվի կատարած գործերի համար: Քանի որ եթե հոգին առանց մարմնի պսակվի կամ պատժվի, այդ Աստծո անիրավություն կհամարվի: Երրորդ՝ փիլիսոփաներն ասում են, թե մարդը կատարելություն է, իսկ եթե մարդը հարություն չառնի, անկատար կլինի աշխարհը, քանի որ աշխարհի կատարելությունը երեք արարածների մեջ է՝ պարզ, անմարմին գոյացությունների, ինչպիսիք են հրեշտակները, ամենեւին անմարմինների, որոնք չորս տարրերքներն են, եւ անմարմին եւ մարմնավոր [գոյացություններից] բաղկացածների, որոնք մարդիկ են: Ապա ուրեմն՝ հարկ է, որ մարմինները հարություն ունենան, որպեսզի աշխարհը կատարյալ մնա: Չորրորդ՝ նույն Սուրբ Գրքի վկայություններից է հայտնի: Ինչպես ասում է Եսային. «Մեռելները հարություն կառնեն, վեր կկենան նրանք, ովքեր դրված են գերեզմանում»: Եվ Հոբն ասում է. «Գիտեմ, որ հավերժական է նա, ով երկրի վրա պիտի փրկի ինձ՝ հարություն տալով մարմնիս»: Իսկ Եզեկիելը տեսավ ոսկորների բազմությունը, որոնք կենդանացան: Ավետարանն ասում է. «Կգա ժամանակ, երբ մեռելները կլսեն Աստծո Որդու ձայնը եւ դուրս կգան»: Պողոսն ասում է. «Փողը կփչի, եւ ի Քրիստոս մեռածները հարություն կառնեն»: Հինգերորդ՝ մեր հարությունը հաստատվում է Քրիստոսի հարությամբ, որը գերեզմանից հարություն առավ՝ մեզ բնութենակից լինելով, «եւ եղավ անդրանիկը մեռելներից եւ ննջեցյալների առաջին պտուղը»: Վեցերորդ՝ նրանց իսկ, ովքեր աշխարհի համար մեռան եւ Քրիստոսի հետ պիտի կենդանանան, հույսից եւ առաքինությամբ [այս աշխարհից] ելքից, ոմանք սրի մահվամբ. ոմանք մարմնի ճգնությամբ եւ զանազան նեղությունների համբերելով եւ անձուկ ճանապարհով գնալով ելան այս աշխարհից: Որի համար էլ առաքյալն ասում է. «Ինչո՞ւ ենք մենք ամեն ժամ ճգնում եւ հանապազ մեռնում, եթե մեռելներն արդարեւ հարություն չեն առնելու»: Յոթերորդ՝ նրանց խոստացված բարիքներից, ըստ առաքյալի՝ «Որ աչքը չտեսավ, եւ ականջը չլսեց, այն պատրաստեց Աստված Իրեն սիրողների համար»: Եվ Տերն ասում է. «Ուր ես եմ, այնտեղ նաեւ իմ պաշտոնյան կլինի»: Մեկ այլ տեղում՝ «Կուտեք եւ կխմեք իմ արքայության մեջ», եւ թե՝ «Այստեղ հարյուրապատիկ կստանա եւ հավիտենական կյանքը կժառանգի»:



Շարունակությունը՝ էջ 6

ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴ

# ՍՈՒՐԲ ՀՈԳԻ

## ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Սուրբ Հոգու աստվածությունը հաստատվում է նախ՝ Ծննդոց գրքում նշվող ջրերի վրա Նրա շրջելով, ապա՝ հինկտակարանյան մեծ մարդկանց կողքին Սուրբ Հոգու առկայությամբ: Փորձության ժամանակ Քրիստոսն Ինքը չգնաց անապատ, այլ Սուրբ Հոգին Նրան տարավ, եւ երբ, համաձայն «Գործք առաքելոց»-ի, Անանիան ստեց, Պետրոս առաքյալը, բացահայտորեն Սուրբ Հոգուն Աստված անվանելով, Անանիային ասաց, թե ինչո՞ւ Սուրբ Հոգուն ստեց. մարդկանց չստեց, այլ՝ Աստծուն: «Գործք»-ում Սուրբ Հոգին Ինքն է անձամբ խոսում առաքյալների հետ եւ ասում, թե ում որտեղ պետք է ուղարկել քարոզչության:

### Սուրբ Հոգու էջքը

Մկրտության ժամանակ Սուրբ Հոգին, իբրեւ խաղաղություն ու հաշտություն բերող, աղավնու կերպարանքով իջավ, որովհետեւ այդ ժամանակ մարդկությունը երես էր թեքել Աստծուց: Սակայն շատ ուսուցանող է հատկապես հրի ձեւով երեւումը: Այսօր շատ մարդկանց սրտերը կարծես սառել-կարծրացել են ոչ միայն Աստծո եւ ամենայն երկնայինի հանդեպ, այլեւ սառնություն է զգացվում հաճախ միջանձնական հարաբերություններում: Հուրը հալեցնում է պինդ իրերը, ինչպես օրինակ՝ երկաթը, եւ թրծում ու ամրացնում հեղհեղուկները, ասենք՝ կավից պատրաստված առարկաները: Նույն կերպ Սուրբ Հոգին հալեցրեց սատանայի զորությունը եւ թրծեց առաքյալներին, որոնք հաստատվեցին հավատքի մեջ: Սուրբ Հոգին կարող է մարդկանց սառած սրտերը ջերմացնել: Դրա համար պետք է, որ Սուրբ Հոգին մեզ վրա եւս իջնի, ինչպես որ առաքյալների: Այն, որ Սուրբ Հոգին նստեց, իջավ առաքյալների վրա, ցույց է տալիս, որ նրանք բոլոր մեղքերից արդեն զերծ էին եւ իրենց պատրաստել էին Աստծո համար:

Առաքյալները Սուրբ Հոգին ընդունեցին երեք անգամ: Առաջին անգամ այն ժամանակ, երբ Քրիստոսը նրանց ուղարկեց քարոզելու եւ իշխանություն տվեց բուժելու բոլոր հիվանդությունները: Երկրորդ անգամ՝ հարությունից հետո՝ մարդկանց մեղքերին թողություն տալու համար: Երրորդ անգամ առաքյալները կատարելապես Սուրբ Հոգին ընդունեցին Վերնատանը եւ այդ զորությամբ գրեթե ողջ աշխարհը քրիստոնյա դարձրին, ինչն էլ որոշեց մարդկության պատմության, մշակույթի, մտածելակերպի հետագա ընթացքը:

### Շնորհների ստացում

Այսօր բազում մարդիկ մկրտվում են՝ Քրիստոսից պատվեր ու օրինակ ունենալով, եւ մկրտության ժամանակ, ինչպես գիտենք, Սուրբ Հոգին Իր շնորհներն է պարգեւում



մկրտվողին: Բայց երբեմն տեսնում ենք, որ շատ մկրտվածներ մնում են թերությունների եւ հոգեւոր արատների մեջ: Սուրբ Հոգու իջնելը որեւէ անձի վրա կամ շնորհների բաշխումը տեղի է ունենում նաեւ այսօր: Սակայն հաջողության գաղտնիքն այն չէ, թե մենք ինչ ենք ստանում, այլ այն, թե ինչպես ենք կարողանում օգտագործել ստացածը: Եթե մի անոթ լի է որեւէ հեղուկով, ապա այնտեղ չենք կարող այլ բան լցնել, լցնելիս էլ, միեւնույն է, դուրս կթափվի: Ճիշտ այդպես էլ, եթե մեկը լցված է մարմնական կրքերով, ունի երկրային մտածելակերպ, չի կարող իր մեջ պահել աստվածային շնորհները:

### Երրորդության մեկնությունը

Երբեմն Եկեղեցու գիրկը նոր դարձած մարդիկ, Սուրբ Երրորդության մասին լսելով, հարցնում են. «Ինչպե՞ս, ստացվում է, որ մենք պետք է պաշտենք երեք աստվածների»: Կրոններ կան, որոնց միաստվածությունը հասկանալի է նույնիսկ երեխային, մինչդեռ ըստ քրիստոնեության՝ չափազանց սխալ է Աստծուն որպես պարզ մեկություն պատկերացնելը: Քրիստոնեության, այսինքն՝ ճշմարիտ կրոնի մեջ Աստված բարդ մեկություն է՝ Սբ. Երրորդություն՝ մեկ Աստված, մեկ կամք, բայց երեք տարբեր Անձեր՝ Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի: Սուրբ Երրորդության գաղափարը մարդկային մտքին հասանելի դարձնելու համար եկեղեցական հեղինակները բացատրում էին ավելի պարզ օրինակներով, ինչպես ասենք՝ ջուրն է: Ջրի բնությունը մեկ է, սակայն ունի երեք հատկություն՝ աղբյուր, գետ եւ ծով (լիճ կամ օվկիանոս), ծագիկը մի է, բայց գույնը եւ հոտը նրանից են: Ինչպես անհնար է, որ արեգակն առանց լույսի եւ ջերմության լինի, այդպես էլ անհնար է, որ Հայրն առանց Որդու եւ Սուրբ Հոգու լինի: Որքանով որ հուրը հուր է, եւ լույսն ու ջերմությունը նրա հետ են, այնպես եւ Հայրը Հայր է, եւ Որդին ու Սուրբ Հոգին Նրա հետ են:

Մենք ասում ենք, որ պետք է հավատարիմ մնանք մեր հայրերի հավատքին: Սակայն առավել կարեւոր է ճշմարտությունը, որովհետեւ եթե մեր նախնիներն էլ այս սկզբունքով առաջնորդվեին, իրենք էլ ժամանակին քրիստոնյա չէին դառնա՝ պատճառ բերելով իրենց հայրերի հեթանոսական հավատքը: Հետեւաբար մի կողմ թողնելով մեր բարեպաշտ նախնիներին՝ քննենք եւ տեսնենք, թե իրականում ո՞րն է Աստվածաշնչի ճշմարտությունը: Եթե այն է, ինչ քարոզում են աղանդները, ուրեմն թողնենք ամեն ինչ եւ գնանք նրանց ետեւից, իսկ եթե Քրիստոսի առաքյալների հիմնադրած Սուրբ Եկեղեցու քարոզածն է ճշմարտությունը՝ առանց խեղաթյուրումների հիմնված միմիայն Աստվածաշնչի վրա, ուրեմն չտարվենք աղանդներով եւ հավատարիմ մնանք մեր Մայր Եկեղեցուն: Որոշ աղանդներ մերժում են Սուրբ Երրորդության գաղափարը. հատկապես Եհովայի վկաների առաջնորդներից Ռուտերֆորդը նույնիսկ իր հետեւորդներին սովորեցրել է, որ «Ս. Երրորդության հեղինակը սատանան է»: Եհովայի վկաները վախեցնում եւ սարսափեցնում են իրենց միամիտ հետեւորդներին՝ ասելով, որ ի վերջո Երրորդություն դավանող քրիստոնեական աշխարհը պատասխանատվության կկանչվի եւ կպատժվի: Աղանդավորները Սուրբ Երրորդության դեմ բերում են հետեւյալ վկայությունը. «Լսի՛ր, Իսրայե՛լ, մեր Տեր Աստվածը միակ Տերն է» (Մարկ. ԺԲ 29, Բ Օր. Զ 4): Սակայն, ըստ քրիստոնեական վարդապետության, պարզապես հիմարություն է երեխայի պես Աստծուն պատկերացնել որպես պարզ մեկություն. այստեղ *մեկ* բառը բաղադրյալ մեկություն է նշանակում: Բարդ մեկության այլ օրինակներ եւս կան Աստվածաշնչում: Օրինակ՝ Հին Կտակարանից՝ «Դրա համար այրը պիտի թողնի իր հորը եւ մորը եւ իր կնոջը պիտի հարի, ու մեկ մարմին պիտի լինեն» (Ծնն. Բ 24): Մեկ այլ օրինակ էլ Նոր Կտակարանից՝ «Դուք ամենքդ մեկ եք ի Քրիստոս Հիսուս» (Գաղ. Գ 28): Հետեւաբար՝ *Տեր Աստված մեկ է* բանաձեւը ցույց է տալիս Աստծո աստվածային մեկ բնությունը եւ երբեք չի բացառում այս բաղադրյալ մեկության մեջ Երրորդությունը:

Ինչպես արեգակն ունի լույս, ճառագայթ ու ջերմություն եւ այս երեքով միասին է արեգակ, ճիշտ այդպես էլ Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին մեկ Աստվածության երեք Անձերն են, եւ երեքով միասին են մեկ ամբողջություն: Սա է ապացուցում նաեւ Հիսուս Քրիստոսը՝ նշելով երեք Անձերի եւ ասելով, որ Հայրը մեկ այլ Մխիթարիչ պիտի ուղարկի՝ Սուրբ Հոգուն, որը կուսուցանի առաքյալներին եւ կհիշեցնի նրանց Իր ասածները (Հովհ. ԺԴ 26): Բացի դրանից, Ծննդոց գրքի եբրայերեն բնագրում *Աստված* բառը հոգնակի թվով է, իսկ նրա հետ գործածվող բայը՝ եզակի, ինչը եւս ապացուցում է երեք աստվածային Անձերով մեկ Աստվածությունը: Քրիստոսն Ինքը տվեց Սուրբ Երրորդության բանաձեւը՝ ասելով. **«Մկրտեցեք Հոր, Որդու եւ Սուրբ Հոգու անունով»՝ երեքի համար** գործածելով անուն բառի եզակի ձեւը՝ ցույց տալու համար Երրորդության մեկ Աստվածություն լինելը: Եվ քանի որ որպես մեկ աստվածության Անձեր նշվում են երեքը, ապա այստեղից էլ հետագայում առաջացել է Երրորդություն եզրը:

*Շարունակելի*

***Տ. Արամ քհն. ՄԱԿԱՐՅԱՆ***

---

ՇԵՆՈՒԴԱ Գ

# ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱՍ Բ

## ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ ԵՎ ՆՐԱ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

### ԳԼՈՒԽ ԺԱ

### ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍՆ ԻՋԵԼ Է ԵՐԿՆՔԻՑ

1. Տեր Հիսուսն ասում է հրեաներին. «Ես եմ երկնքից իջած հացը» (Հովհ. Զ 41): Այսպիսով, Նա կյանքի տվիչ է, որովհետեւ «Աստծո հացը նա է, որ իջնում է երկնքից եւ կյանք տալիս աշխարհին» (Հովհ. Զ 33): Այնուհետեւ կրկնում է նույնը. «Ես երկնքից իջա» (Հովհ. Զ 38):

Նա երկնքից Իր իջնելը բացատրում է՝ ասելով.

2. «Ելա Հորից եւ եկա աշխարհ, դարձյալ աշխարհը թողնում եմ եւ գնում Հոր մոտ» (Հովհ. ԺԶ 28): Նա շեշտում է «Ելա Հորից» խոսքը, որովհետեւ Իր աշակերտներին դրանից առաջ ասում է. «Քանզի Հայրն Ինքն էլ սիրում է ձեզ, որովհետեւ դուք Ինձ սիրեցիք եւ հավատացիք, որ Ես Աստծուց եմ ելել» (Հովհ. Զ 27): Նա նույն բանի մասին ասում է նաեւ հրեաների հետ Իր խոսակցության ժամանակ (Հովհ. Ը 42):

3. Հետեւաբար, *Տեր Հիսուս Քրիստոսը երկրից չէ, այլ երկնքից եւ ելել է Հորից:*

Նա ունի բնակության Իր բուն վայրը, սակայն մարմնով հայտնվեց երկրի վրա՝ մարդկանց մեջ, որովհետեւ «Իրեն դատարկեց՝ ծառայի կերպարանք առնելով, մարդկանց նման դառնալով» (Փիլ. Բ 7): Նա պետք է բարձրանար երկինք՝ այնտեղ, որտեղից իջել էր: Ինչ վերաբերում է այս երկրին, Տեր Հիսուս Քրիստոսը կար դրա արարումից առաջ, կամ, ավելի ճիշտ, այն արարվել էր հենց Նրա կողմից, քանի որ «Ամեն ինչ եղավ Նրանով, եւ առանց Նրա չեղավ ոչինչ, որ եղավ» (Հովհ. Ա 3): Նա Հոր հետ էր հավիտենապես. Նա ունի Իր բուն կամ, մանավանդ, փառավորյա՛լ բնակավայրը...

4. Տերը բացատրում է Նիկոդեմոսին երկնքից Իր իջնելն ու բարձրանալն այնտեղ: Նա ասում է. «Ոչ որ երկինք չի բարձրացել, բացի Նրանից, ով իջավ երկնքից՝ Մարդու Որդուց, ով երկնքում է» (Հովհ. Գ 13): Երկինքն այստեղ երկինքների երկինքն է նշանակում, ուր ոչ ոք չի բարձրացել կամ այնտեղից իջել, Տեր Հիսուսից բացի, ով Երրորդության Երկրորդ Անձն է եւ «Հոր ծոցում է» (Հովհ. Ա 18), այնտեղ՝ երկինքների երկնքում, որտեղ գտնվում է Աստծո աթոռը, ինչպես Տերն Ինքն է ասում Լեռան քարոզում (Մատթ. Ե 34): Իսկ «Մարդու Որդին, ով երկնքում է» խոսքը՝ ասված Նիկոդեմոսին, նշանակում է, որ երկրի վրա խոսելիս Նա նաեւ երկնքում էր, մի բան, որ ապացուցում է Նրա Աստված լինելը:

Նրա հրաշալի համբարձումը երկինք (Գործք Ա 9) հաստատումն է առաքյալներին ուղղած Նրա այս խոսքի. «Դարձյալ աշխարհը թողնում եմ եւ գնում Հոր մոտ» (Հովհ. ԺԶ 28):

*5. Տեր Հիսուսը երկնքում ո՛չ թե ինչ-որ բնակավայրում ապրող մի սովորական բնակիչ է, այլ ունի իշխանություն այնտեղ:*

Տեր Հիսուսն ընդունեց Ստեփանոս Նախավկայի հոգին, երբ նա քարկոծվելիս դիմեց Տիրոջը՝ ասելով. «Տե՛ր, ընդունի՛ր իմ հոգին» (Գործք Է 59): Դարձյալ Տեր Հիսուսն էր, որ Իր աջ կողմում խաչված ավազակին հանեց երրորդ երկինք (Բ Կոր. ԺԲ 2-4), երբ ասաց նրան. «Այսօր Ինձ հետ դրախտում կլինես» (Ղուկ. ԻԳ 43): Ուրիշ ո՞վ է ընդունում հոգիները եւ ունի իշխանություն նրանց դրախտ տանելու, եթե ոչ՝ Աստված: Իսկ Տեր Հիսուս Քրիստոսն անում է սա:

*6. Տեր Հիսուսն առաքյալներին տվեց Արքայության բանալիները:*

Նա ասում է Պետրոսին՝ իբրեւ առաքյալների ներկայացուցչի. «Եվ Ես քեզ կտամ Երկնքի արքայության բանալիները» (Մատթ. ԺԶ 19), իսկ բոլոր առաքյալներին ասում է. «Ինչ որ կապեք երկրի վրա, կապված կլինի երկնքում, եւ ինչ որ արձակեք երկրի վրա, արձակված կլինի երկնքում» (Մատթ. ԺԸ 18):

Այստեղ հարցնում ենք. ո՞վ իրավունք ունի մարդկանց տալու երկնքի բանալիները եւ իշխանություն՝ կապելու եւ արձակելու այնտեղ, եթե ոչ՝ Աստված:

*7. Երկնքում Տեր Հիսուսի իշխանությունը հայտնի է դառնում նրանով, որ բոլոր երկնային զորությունները երկրպագում են Նրան:*

Այս մասին առաքյալն ասում է. «... որպեսզի Հիսուս Քրիստոսի անունով իջնի ամեն ծունր՝ երկնայինների, երկրայինների եւ սանդարամետականների» (Փիլ. Բ 10): Հրեշտակներից (երկնայիններից) երկրպագություն ընդունելը Նրա աստվածության ապացույց է:



*8. Այլեւ՝ Նա առավել բարձր է, քան երկինքները եւ այնտեղ բարեխոսում է մեզ համար:*

Սա նշված է սբ. Պողոսի՝ եբրայեցիներին ուղղած թղթում. «... քանզի միշտ կենդանի է՝ բարեխոսելու նրանց համար: Որովհետեւ հենց այսպիսի քահանայապետ էր մեզ պետք՝ սուրբ, անմեղ, անարատ, մեղավորներից զատված եւ երկինքներից էլ բարձր» (Է 25-26):

### ԳԼՈՒԽ ԺԲ

### ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍՆ ԱՌԱՋԻՆՆ ՈՒ ՎԵՐՋԻՆՆ Է

Այս պնդումը պիտի ներկայացնենք չորս կետով՝

ա) Միայն Աստված է առաջինն ու վերջինը: Չկա աստված Նրանից առաջ կամ հետո:

բ) Տեր Հիսուս Քրիստոսը նույնպես առաջինն ու վերջինն է, Ալֆան եւ Օմեգան *(հունարեն այբուբենի առաջին եւ վերջին տառերը - թրգմ.)*:

գ) «Առաջինի» նշանակությունն ու կարեւորությունը:

դ) Եհովայի վկաների կողմից հերքման երկու փորձ:

*ա) Միայն Աստված է առաջինն ու վերջինը:*

Հավիտենության մեջ Աստված մենակ էր, ինչ պատճառով եւ առաջինն ու վերջինն էր: Այնուհետեւ Նա ստեղծեց բոլոր արարածներին. նրանք բոլորը Նրա ձեռքի գործն են: Ոչ մի արարած չի կարող ասել, թե ինքն Ալֆան եւ առաջինն է, որովհետեւ այսպիսի կարգավիճակը միայն Աստծուն է պատկանում: Ուստի Եսայու գրքում Աստված Իրեն է վերագրում այն՝ ասելով. «Ես եմ առաջինն ու Ես եմ վերջինը, Ինձանից բացի ուրիշ Աստված չկա» (ԽԴ 6). «Ես եմ առաջինը եւ Ես եմ վերջինը: Իմ ձեռքը գցեց երկրի հիմքերը, եւ Իմ աջը հաստատեց երկինքը» (ԽԸ 12-13) *(վերջին երկու տեղիները թարգմանված են ըստ եբրայական բնագրի - Թրգմ.)*. նաեւ՝ «Ինձանից առաջ ուրիշ Աստված չի եղել եւ Ինձանից հետո էլ չի լինի» (Ես. ԽԳ 10):

*բ) Տեր Հիսուս Քրիստոսն առաջինն ու վերջինն է:*

1. «Հայտնության» գրքում կա մի մարգարեություն, որն ասում է. «Ահա գալիս է ամպերով, եւ կտեսնեն Նրան բոլոր աչքերը, նաեւ նրանք, որ խոցեցին Նրան: Եվ կկոծեն Նրա պատճառով երկրի բոլոր ազգերը: Այո՛, ամե՛ն: «Ես եմ Ալֆան եւ Օմեգան, սկիզբն ու վերջը»,- ասում է Տերը, որ կա, կար եւ գալու է, Ամենակալը» (Հայտ. Ա 7-8):

1953թ. ես այս համարները քննարկեցի մի Եհովայի վկայի հետ: Սկզբում նա շփոթվել էր, իսկ հետո ասաց. «Միայն առաջին համարն է Քրիստոսի մասին, իսկ երկրորդը Հոր մասին է»: Նա ասաց սա չնայած այս խոսքերի հստակությանը եւ չնայած «որ գալու է» արտահայտությանը, որը վերաբերում է Քրիստոսին, ով դարձյալ պիտի գա: Ինչեւէ, հավատքը չի հիմնվում միայն մեկ համարի վրա, եւ կան շատ ուրիշ համարներ էլ, ինչպես պիտի տեսնենք:

*Շարունակությունը՝ էջ 8*

# ԱՆԱՊԱԿ ԲԱԺԱԿԻ

## ԽՆԴԻՐԸ ՀԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԱՆԴԱՍՏԱՆՈՒՄ

*Սկիզբը՝ 2004-ի թիվ 18-24, 2005-ի թիվ 1-5*

### Ս. ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ՄԵԿ ՎԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Եսայի Նչեցին էլ իր գործում նշում է, որ ինքը տեղյակ է սարինացիների աղանդի մասին, սակայն միեւնույն ժամանակ պնդում է, որ, այո՛, Ոսկեբերանի խոսքն այստեղ ուղղված է բաժակի մեջ ջուր խառնողներին. *«... եւ տեսի, քանզի ստոյգ օրինակն, զի զջուր արկանել աւէ եւ ոչ ջուր մատուցանել»* (ՄՄ ձեռ. N 9622, էջ 728):

Միայն ջրով պատարագողների մասին հիշատակում է նաեւ Հովհաննես Ծործորեցին († 1338): Նա, մեկնելով Մատթեոսի Ավետարանի ԻԶ 29 համարը, գրում է. *«Եւ ընդէ՞ր ո՛չ ջուր արբ յորժամ յարեաւն, այլ գինի.* նախ զի ցուցցէ թէ նովիմ մարմնով որով զբաժակ մահուն էարբ եւ չարչարեցաւ, նոյն մարմնով եւ յարեաւ: Եւ երկրորդ՝ *զի զմիւս հերձուածն արտաքս խլեսցէ. զի են ոմանք որ ի սուրբ խորհուրդն ջո՛ւր ի կիր արկանեն*, այսինքն՝ որք փոխանակ գինւոյ ջրո՛վ պատարագեն, որք են ոբիանոսք... *յորժամ զխորհուրդն աւանդեաց՝ գինւով աւանդեաց յամօթ նոցին, եւ յորժամ յարեաւն առանց խորհրդոյ ի սեղանն լոկ գինին էարբ, քանզի աւէ թէ՝ ի բերոյ որթոյ, եւ որթն գինի եւ ո՛չ ջուր ծնանի »* (Մեկնութիւն սուրբ Աւետարանին որ ըստ Մատթէոսի. արարեալ ի սրբոյն Ներսիսէ Շնորհալւոյ մինչ ի համարն 17 հինգերորդ գլխոյն, եւ անտի աւարտեալ յերանելւոյն Յոհաննու Երզնկացւոյ որ եւ կոչի Ծործորեցի, Կ. Պոլիս, 1825, էջ 562-563): Սակայն նույն Ծործորեցին, մեկնելով Մատթեոսի Ավետարանի ԻԵ 50 համարը, Քրիստոսի կողից բխած արյան եւ ջրի համար ասում է, *«...այսպէս եւ ի կողիցն երկրորդն Ադամայ շինեցաւ եկեղեցի, որ ջրովն մաքրի եւ զարիւնն ըմպէ»* (Նույն տեղում, էջ 601): Երբ համեմատում ենք վերջինիս մեկնությունը Ոսկեբերանի խոսքերի հետ, նույնական բաներ ենք տեսնում, չնայած Ծործորեցին այս հատվածում չի տալիս Սուրբ Հոր անունը: Ի՞նչն է այս պարագայում մեզ համար հետաքրքիր. եթե մեր եկեղեցու հայրերը ս. Հովհանի խոսքերի մեջ տեսել են անապակ գինով պատարագելը, ապա Հովհաննես Ծործորեցին, լինելով միարարական շարժման կողմնակիցներից, այն մեկնաբանում է բյուզանդական ձեւով՝ դրա մեջ տեսնելով միայն ջրով պատարագելը:

Ս. Հովհան Ոսկեբերանի Մատթեոսի մեկնության այս հատվածը քննարկման առարկա է դարձել նաեւ Հուստինիանոս Բ կայսեր օրոք՝ 691/2 թ. Կ. Պոլսում տեղի ունեցած Տրուլի Բ ժողովում (Սույն ժողովը գումարվել է կայսերական «Trulla» կոչվող գմբեթասրահում, պատմության մեջ հայտնի է Տրուլի Բ ժողով անվանումով, որին մասնակցել են 165 եպիսկոպոսներ: Ժողովի ընթացքում ընդունվել է 102 կանոն: Եթե «տիեզերական» հինգերորդ եւ վեցերորդ ժողովներում քննարկվել են միայն դավանաբանական բնույթի հարցեր, ապա այս ժողովի հիմնական նպատակն է եղել կարգապահական կանոնների սահմանումը: Այդ իսկ պատճառով եկեղեցական պատմության մեջ այս ժողովը հայտնի է Quinisext (Concilium Quinisextum, *Eunodos penthekte*) անունով, որ նշանակում է հինգերորդի եւ վեցերորդի լրացում, այս մասին տե՛ս The Catholic Encyclopedia, http://www.newadvent.org/cathen/04311b.htm., Պատմութիւն եկեղեցական, հաւաքեալ յարժանահաւատ մատենագրաց, աշխատասիրութեամբ Տեառն Իգնատիոսի Վ. Փափազեանց Տարօնոյ Արքեպիսկոպոսի, Վենետիկ, 1848, էջ 315-316, Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 885-886, А. В. Карташев, Вселенские соборы, стр. 562-570):

Հայերի եւ անապակ գինու սովորության դեմ է այս ժողովի ԼԲ կանոնը, ուր մասնավորապես ասվում է. *«Մեզ է հասել այն տեղեկությունը, որ Հայերի երկրում, ովքեր անարյուն պատարագ են կատարում, սուրբ սեղանի վրա միայն գինի են մատուցում՝ առանց նրա հետ ջուր խառնելու, եւ նրանք վկայակոչում են Եկեղեցու վարդապետ Հովհան Ոսկեբերանին, որն իր Մատթեոսի Ավետարանի մեկնության մեջ հետեւյալն է ասում. «... Սրանից հետեւաբար նրանք (հայերը) կարծում են, թե վարդապետը ս. պատարագի մեջ ջրի կիրարկությունը մերժում է: Որպեսզի նրանք այսուհետեւ անգիտության մեջ չմնան, ուղղափառ տեսանկյունից մեկնաբանում ենք Հոր միտքը: Որովհետեւ հին է չար աղանդը ջրամատուցողների, որոնք իրենց պատարագի ընթացքում գինու փոխարեն միայն ջուր են օգտագործում: Վերոնշյալ արտահայտությունն Աստվածակիր Հայրը կատարել է այս աղանդի ապօրեն ուսմունքը հերքելու նպատակով, եւ ցույց տալու համար, որ այդ հակառակ է Առաքելական ավանդությանը: Քանի որ իր եկեղեցում, որտեղ նա քահանայագործում էր, անարյուն պատարագի ժամանակ ջուր էր խառնում գինու հետ...»* (The Council in Trullo revised, edited by George Nedungatt, Michael Featherstone, Pontificio Instituto Orientale, Rome, 1995, p. 106-108, http://protevgen.nm.ru/pages/articles/0124.htm, **Աբէլ քահանայ Օղլուգեան**, նշվ. աշխ., էջ 79-80, Աղէքսանդր Վ. Պալճեան, նշվ. աշխ., էջ 247-248, 287-288: Այս մասին տե՛ս նաեւ **Епископ Виссарион** (Нечаев), стр. 21): Սույն կանոնից տեղեկանում ենք, որ հայերն այդ ժամանակ անապակ էին պատարագում, եւ որ արդեն իսկ հայ իրականության մեջ լայնորեն կիրառության մեջ էր Ս. Հովհան Ոսկեբերանի վերոգրյալ արտահայտությունը՝ չնայած այն բանին, որ Ոսկեբերանի այդ վկայությունը, ինչպես նշել ենք վերեւում, առաջին անգամ օգտագործել է Սահակ Հայրապետը: Հավանաբար այն վկայակոչվել է նաեւ այլ գործերում, որոնք դժբախտաբար այսօր անհետ կորած են: Հ. Գաթրճյանը Ս. Պատարագին նվիրված իր արժեքավոր աշխատության մեջ նշում է, որ Տրուլի ժողովի 33 կանոնից (իրականում հայերին վերաբերում է Տրուլի ժողովի ԼԲ կանոնը) իմանում ենք, որ հայերը ճիշտ չեն հասկացել Ոսկեբերանի խոսքերը. *«Չիմանալով որ սուրբ Հայրը Եբիոնացւոց մինակ ջուր գործածելուն համար կը գրէ, իրենց մոլորութեան նպաստ առած են: Պատմականօք միշտ մանուկ էին Հայք»* (Սրբազան Պատարագամատոյցք Հայոց, էջ 21: Մեծանուն բանասերը, տուրք տալով իր կաթոլիկ հայացքներին, ամեն կերպ փորձում է ցույց տալ հայերիս շեղված լինելը, անգամ մատենագրական վկայություններ է աշխատում գտնել մեր հայրերի գրվածքներում՝ իր ասածն ապացուցելու համար:



*Շարունակությունը՝ էջ 8*



*Սկիզբը՝ էջ 4*

## ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ

# ՔԱՐՈԶ [ՄԵՌԵԼՆԵՐԻ] ՀԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ութերորդ՝ Քրիստոսով մկրտությունից. հարության հույսով մենք նրա հետ թաղվում ենք մահվամբ, ինչպես ասվում է. «Տնկակից եղանք նրա մահին, որպեսզի նաեւ հարության ժամանակ նրա հետ լինենք»: Ինչպես բնի վրա պատվաստված ոստայնը բնից է ստանում կենդանություն, նաեւ մենք՝ հավատացյալներս, պատվաստվեցինք Նրա մահվանը, եւ մեր կյանքը ծածկված է Քրիստոսով Աստծո մեջ, ինչպես ասում է առաքյալը: Իններորդ՝ ողորմություն, աղոթքներ եւ պատարագներ անողներից. հետնորդներն ու հասարակաց եկեղեցու անդամները մեղքերի պատճառով անում են այդ ամենը, ըստ այն խոսքի, որ ասում է Հակոբոսը. «Արդարների աղոթքը հույժ զորավոր է եւ օգնում է»: Ինչպես Ղազարոսի քույրերի աղաչանքը իրենց եղբոր համար, այնպես էլ ամեն մի աղաչանք եւ տուրք հարության հույսի պատճառով է: Տասներորդ՝ մեր հարությունը հաստատվում է նույն օրինակով, որ տալիս է առաքյալը, որն ասում է. «Քանի որ Աստծո աներեւույթը երեւելի արարածներովս է իմացվելով՝ տեսնվում»:

Ապա ուրեմն նաեւ սերմերի ապացույցով է հաստատվում նաեւ մեռելների հարությունը, ինչպես ասվում է կորնթացիներին. «Անմի՛տ, սերմանածդ չի կենդանանա, եթե չմեռնի»: Եվ երեք պատճառով է սերմերն օրինակ բերում. նախ՝ որովհետեւ բոլորին են հայտնի դրանք՝ ամեն տեղ լինելով, երկրորդ՝ որովհետեւ նաեւ իր Վարդապետը բերեց ցորենի հատիկի օրինակը, երրորդ՝ որովհետեւ այն ճշմարտության համար ամենահարմար օրինակն է: Իսկ այս օրինակը առավել է տասը պատճառով: Նախ՝ քանի որ սերմանվում է եւ ապա՝ բուսնում, այսպես նաեւ մարդն է նախ մեռնում, ապա՝ կենդանանում, ինչպես առաքյալն է ասում. «Սերմանածդ չի բուսնի, մինչեւ չմեռնի»: Երկրորդ՝ քանի որ որպես մեկ հատիկ ընկնում է եւ բուսնում ծաղկած եւ տերեւներով զարդարված, այնպես էլ մերկ մարմինը, մեռնելով, մերկ հարություն չի առնում, այլ փառքով, ինչպես նույն գլխում է ասվում. «Թե պետք է, որ այս ապականացուն անապականություն հագնի, եւ մահկանացուն՝ անմահություն»:

Երրորդ՝ ինչպես նույն հատիկը սերմանվելով՝ նո՛ւյն հատն է բուսնում՝ ըստ իր տեսակի, նաեւ մեռած մարմինը նույն ինքն է հարություն առնում, ոչ թե մեր նմանը՝ ըստ մեր տեսակի, ինչպես ասվում է. «Մենք բոլորս պիտի կանգնենք Աստծո առջեւ, որպեսզի յուրաքանչյուրն իր մարմնով ընդունի, ինչ որ գործեց»: Չորրորդ՝ քանի որ այլեւայլ ժամանակներում են սերմանվում եւ մի ժամանակում վախճանվում, նաեւ Ադամից հետո մեռած մարմինները հանկարծակի մի ակնթարթում վերջին օրը փողի ձայնից կարթնանան», եւ Տերն ասում է. «Կգա ժամանակ, երբ բոլորը, որ գերեզմանում են, կլսեն Աստծո Որդու ձայնը եւ դուրս կելնեն»: Հինգերորդ՝ քանի որ նախ ծաղկում, ապա պտուղ են տալիս. ծաղիկը պտղի նախաշավիղն ու կարապետն է, իսկ մեռյալները, մինչեւ հարություն չառնեն, փառք չեն ստանա. սակայն արդարների հոգիները, որոնք մաքրվեցին սուրբ կենցաղով, ծաղկում են իրենց բնական պայծառությամբ: Վկա ունենք մեծն Անդրեասին՝ Հովհաննեսի տեսիլքը մեկնողին, որն ասում է. «Սպիտակ հագուստները նրանց ծաղկած առաքինության պայծառությունն են ցույց տալիս՝ մարմնի թանձրությունից հետո փոխվելով, որ հագել են նախքան խոստացված փառքերը եւ հանգստանում են Աստծո մոտ, ինչպես լսեցինք, եւ ճշմարիտ է հանգստանալը ախտավոր կրքերի թանձրությունից ազատվածների եւ Աստծո մոտ եղողների, սակայն նրանք դեռեւս չեն ընդունել փառքերը, մինչեւ երկրորդ սքանչելի գալուստը: Դարձյալ ասում է. «Սպիտակ հանդերձը, որ հագել են, Քրիստոսի շնորհների մաքրությունն է, որից բոլորս վայելեցինք, ինչպես ասում է. «Երբ հոգին սրբվում է, ընդունում է բնական պայծառությունը»: Վեցերորդ՝ քանի որ ոմանք առատապտուղ են, ոմանք՝ սակավապտուղ, իսկ ոմանք էլ՝ անպտուղ: Այսպես էլ ընտրյալների մարմիններն են զանազանվում ըստ [գործերի] մեծության: Յոթերորդ՝ քանի որ ոմանք ջրարբի են, ոմանք՝ անջրդի, ջրարբի նրանք են, ովքեր մեռել են հավատով եւ հույսով, եւ Եկեղեցին նրանց հիշատակությունը կատարում է պատարագի ժամանակ, պահքով, աղոթքով եւ ողորմություն անելով: Իսկ անջրդին անհույս մեռածներն են: Ութերորդ՝ քանի որ բարի եւ չար սերերը միասին են բուսնում եւ մնում մինչեւ հունձքը, մինչեւ իսկ՝ մինչեւ կալը՝ ըստ Տիրոջ առակի: Նմանապես եւ մեռած մարմինները մնում են հողում, իսկ բոլոր հոգիները՝ իրենց կայաններում. թեպետեւ Աստծո քաղցր ակնարկությամբ կամ սպառնալիքով արդարներն ու մեղավորները աջ եւ ձախ խորաններում են լինում, սակայն բաժանումը հարության Օրն է լինելու, քանի որ Տերն ասում է. «Այն ժամանակ պիտի բաժանվեն»: Իններորդ՝ քանի որ բոլոր սերմերը բուսնելով եւ նույն հասակի, այսինքն՝ իրենց կատարելությանը հասնելով են հնձվում: Այսպես նաեւ բոլոր ննջեցյալները՝ ծեր թե մանուկ, հարություն պիտի առնեն նույն՝ կատարյալ հասակի չափով՝ երեսնամյա: Քանի որ մանուկը անկատար է, դեռ չի հասել կատարելության, նույնպես էլ ծերն է անկատար, քանի որ անցել է կատարյալ [տարիքից], իսկ միջինը՝ երիտասարդությունը, կատարյալ հասակ է: Այդ հասակում ստեղծվեց մեր նախահայր Ադամը, հարություն առավ մեր Տերը, ինչպես Պողոսն է ասում եփեսացիներին. «Մինչեւ բոլորս հասնենք կատարյալ մարդու աստիճանին՝ ունենալով ճիշտ Քրիստոսի հասակի չափը»: Տասներորդ՝ ինչպես հատիկը սերմանվելուց, բուսնելուց, չարչարվելուց եւ հրի միջով անցնելուց հետո է, սեղան դրվելով, պատվվում, այնպես էլ մեռելների հարության օրը պիտի ընտրվեն, երբ հրով հայտնի պիտի դառնան փայտը, խոտը, եղեգը, այսինքն՝ մեղավորները, որոնք այնտեղ պիտի մնան, եւ ոսկին, արծաթը, ակները, որ արդարներն են, եւ որոնք ավելի պիտի պայծառանան. եւ ապա «պիտի բազմեն երկնավոր Հոր սեղանին»:

Մեզ մնաց խոսել այն հերձվածողների անօրինությունների մասին, ովքեր ուրանում են, թե մարդիկ մեռելներից հարություն պիտի առնեն: Նախ՝ նրանք հակառակվում են աստվածային կամքին. Աստված Իր ձեռքով այնպիսի մարմին ստեղծեց՝ խառնելով այն անմահ հոգու հետ, որը հարմար լինի հարություն առնելու համար: Երկրորդ՝ սուտ են համարում Աստվածաշունչ բոլոր Գրքերը, որոնք վկայում են մարդկանց հարությունը (այն, որ Տերն ասում է, թե օրենքից մի նշանախեց անգամ չի ընկնի): Երրորդ՝ այդպիսով նաեւ Քրիստոսի հարությունն են ուրանում, ինչպես ասում է Պողոսը կորնթացիների թղթում. «Եթե չկա մեռելների հարություն, ապա նաեւ Քրիստոս հարություն չառավ»: Չորրորդ՝ զուր եւ ընդունայն են ցույց տալիս արդարների բոլոր ջանքերը, ճգնություններն ու չարչարանքները, քանի որ եթե չկա հարություն, ապա Աստված չի հատուցի նրանց: Հինգերորդ՝ ունայն են դարձնում Աստծո արդարությունը, թե Աստված մյուս կյանքում չի հատուցելու նրանց, ովքեր մեռան: Վեցերորդ՝ մարդիկ, լսելով, որ չկան հարություն, դատաստան եւ դժոխքի սպառնալիք, սանձարձակորեն մեղքերի մեջ կընկնեն ու կմնան: Յոթերորդ՝ այն խոսքերը, թե չկա հարություն, եւ ոչ՝ երկնքի արքայության փառքի հույս, ինչպես առասպելաբանում էին լակոնացիները՝ ասելով. «Ուտենք, խմենք, քանի որ վաղը պիտի մեռնենք», շատերին հուսահատության եւ կորստյան կմատնեն: Ութերորդ՝ տկար են համարում Աստծո անչափելի զորությունը, որ եթե ոչնչից գոյացրեց բոլոր էակներին, կարո՛ղ է նաեւ մեռելներին կենդանացնել հողից: Իններորդ՝ նրանք չգիտեն Աստծո ամենակարող իմաստությունը, որ տնօրինում է ամեն բան ամեն բանում, ինչպես նրանց մասին ասում է կորնթացիների թղթում. «Ոմանք չունեն Աստծո ճանաչումը. համոթ ձեզ եմ ասում այս»: Տասներորդ՝ ովքեր ուրանում են հարությունը, որ աշխարհի վերջն է, նրանք ուրանում են նաեւ այս աշխարհի սկիզբն ու արարումը, այնպես են համարում, թե արարածներն իրենք իրենց են եղել, մանավանդ դառն ու դաժան մտքով կարծում են, թե Աստված չկա, որոնց այպանում է մարգարեն՝ ասելով. «Անզգամն իր մտքում ասաց, թե՝ Աստված չկա»: Մեկն ասում է՝ ովքե՞ր են դրանք, եթե ոչ նրանք, ովքեր թեպետեւ խոսքով խոստովանում են, սակայն իրենց չար գործերով եւ մեղսամակարդ անձերով ուրանում են հարությունն ու հավիտենական կյանքը: Նրանցից՝ դեպի կորուստ տանող այդպիսի չար հերձվածներից, թող փրկի մեզ Քրիստոսը եւ Իր հարության շնորհով թող արժանացնի այն բանին, ինչին հուսում եւ հավատում ենք ի Տեր մեր Հիսուս Քրիստոս, որին Հոր եւ Սուրբ Հոգու հետ վայել է փառք, իշխանություն եւ պատիվ այժմ, միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն:

*Աշխարհաբարի վերածեց*
*Մարթա ԱՐԱԲՅԱՆ*

# Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻ ԽՈՍՔ ԸՆԴ ԱՍՏԾՈ

## (հատված Տ. Ռուբեն աբեղա Զարգարյանի անդրանիկ քարոզից)

*Փա՛ռք Քեզ,*
*Աստուա՛ծ, փա՛ռք Քեզ,*
*յաղագս ամենայնի Տէ՛ր,*
*փա՛ռք Քեզ:*

***Փա՛ռք*** Քեզ, Աստվա՛ծ, փա՛ռք Քեզ, որ արարչական նախախնամությամբդ տակավին անհաստատ քայլերս ուղղորդեցիր անձեռակերտ փրկարանդ ու սրբարանդ՝ մկրտությամբ մեղավորիս վերստին ծնելով եւ Քեզ որդեգրելով: Այլեւ որպես «ընտրյալ անոթ»՝ նվիրագործեցիր ու քահանայության կոչեցիր՝ Սբ. Ավազանից մարդկային հոգիներին Քեզ որդեգիրներ ծնելու: Աղաչանքս է՝ անճառելի փառքիդ ճառագայթմամբ հոգուս խորանում անսասանելի հավա՛տք հաստատիր:

***Փա՛ռք*** Քեզ, Աստվա՛ծ, փա՛ռք Քեզ, որ արարչական սիրովդ անարժանիս Մարմնիդ ու Արյանդ կենարար հաղորդությանն արժանացրիր: Այլեւ որպես խորհուրդներիդ տնտես՝ մարդկային հոգիներին նույն սրբարար Հաղորդության մատակարարմանը կարգեցիր: Աղաչանքս է՝ ամենասրբության ակնաղբյուրից մարմնիս տաճարում սրբարար ցո՛ղ կաթեցրու եւ Սբ. Սեղանիդ ու Անապակ Բաժակիդ ամբողջական սրբությա՛մբ մերձեցրու:



***Փա՛ռք*** Քեզ, Աստվա՛ծ, փա՛ռք Քեզ, որ անհասելի բարձրությունիցդ անարգիս նայելով, սուրբ առաքյալներիդ համազոր, կանչեցիր՝ Քեզ հետեւելու եւ մարդկային հոգիների որսորդ լինելու, Հայոց միածնաէջ Սրբավայրում սպասեցիր՝ Սբ. Հոգուդ զորությունն առնելու եւ հայ հոգիներին Քեզ վկայելու: Աղաչանքս է՝ առատաբուխ շնորհներիդ հեղմամբ՝ տկարիս օծանման խորագիտությո՛ւն եւ աղավնակերպ միամտությո՛ւն պարգեւիր՝ որպես հայելի՝ աստվածային լույսդ եւ մաքրամաքուր պատկերդ ցոլացնելու:

***Փա՛ռք*** Քեզ, Աստվա՛ծ, փա՛ռք Քեզ, որ անմռաց գիտությանդ շնորհով անարժան ծառայիդ «դետ» կարգեցիր ի մեջ Տանդ Հայոց՝ կամրջի պատգամախոսը լինելու՝ Քո անունով, ամենատես նայվածքիդ ներքո, Քեզ հաշիվ տալու պարտավորության զգացումով: Աղաչանքս է՝ ամենագիտությանդ հորդահոս եղջյուրից իմաստության աղբյո՛ւր ցայտեցրու մտքիս ծալքերում՝ որպես բարի ավետարանիչ՝ ավետարանելդ ամոթ չհամարելու եւ որպես բարի սերմնացան՝ կենաց խոսքդ ժողովրդիդ հոգեւոր ու մտավոր անդաստանում սերմանելու:

*Փա՛ռք Քեզ, Աստվա՛ծ, փա՛ռք Քեզ*, որ անբավ մարդասիրությանդ շնորհով անպիտան ծառայիդ հովիվ կարգեցիր ի մեջ բանավոր հոտիդ Հայոց՝ դալար վայրերում եւ հանգստավետ ջրերի մոտ սնուցելու: Այժմ էլ, Տե՛ր, խղճմտանքս շարունակ հնչեցնում է հարցադրմանդ արձագանքը, թե՝ «Սիրո՞ւմ ես ինձ»: Պատասխանս աղաչանք է՝ անչափելի սիրուդ օվկիանից սրտիս տաղավարում սիրո վտակ բխեցրո՛ւ՝ հոտիդ ինձ վստահված անդամներին ջերմեռանդությամբ խնամելու, ուղղափառությամբ սնուցելու եւ կյանքի հոգեծուփ մրրիկների միջով անվտանգ դեպի փրկության տապան առաջնորդելու:

Ողորմա՛ծ եւ բարերա՛ր Աստված, որ հայրական սիրովդ անառակ որդուս այլակերպության լեռդ ու լուսեղեն հարկդ առաջնորդեցիր եւ հին մարդս՝ անիրավ կյանքով, խաչելով, նորոգված կյանքով նոր մարդուս արդարության հորիզոն ուղենշեցիր, ո՞րն է արժանիքս կամ առավելությունս, ի՞նչ է կարողությունս կամ ուժականությունս, որ հավիտենական նախախնամությամբդ տնտեսությանդ մեջ Քեզ գործակից՝ ճշմարտությանդ քարոզիչ եւ խորհուրդներիդ մատակարար կարգեցիր: Պաղատագին աղաչանքս է՝ կատարյալ հավա՛տ, հո՛յս ու սե՛ր շնորհիր որդուդ՝ որպես «մշակ առանց ամոթոյ»՝ բարի պատերազմս պատերազմելու, ընթացքս ավարտելու եւ հավատս պահելու:

*Փա՛ռք Քեզ, Աստուա՛ծ, փա՛ռք Քեզ, յաղագս ամենայնի,*
*Փա՛ռք Քեզ Տէ՛ր.*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԽԱՉԻԿ Ա ԱՐՇԱՐՈՒՆԻ

## (971/973 - 992)

*Սկիզբը՝ էջ 4*

Դիակի ապականումը զայրացնում է բոլորին, որոնք անիծում են Սմբատ շահնշահին: Շուտով մահացավ եւ նա՝ 989 կամ 990 թվականին: Գահ բարձրացավ հալածական Գագիկը: Սակայն մի ինչ-որ կին քաղաքի անդորրը խախտեց, թե երազում տեսել է, որ Սմբատը մեռած չէ, այլ թմրադեղերով գերեզման է դրվել: Ստիպված եղան գերեզմանը բացել եւ արտաշիրիմում կատարել, որպեսզի բոլորը համոզվեն, որ թագավորը մահացել է: Դաժան վերջաբանի մի արտահայտությունն էլ այն եղավ, որ թագավորի գերեզմանը բացեց այն անձնավորությունը, որը թագավորի կարգադրությամբ արտաշիրիմել էր ցնորվածի դին:

Խաչիկ Ա Արշարունի կաթողիկոսի վերջին գործերից մեկը եղավ Գագիկ Ա թագավորի օծումը, որը վերջին Բագրատունի թագավորն էր, որ կրում էր շահնշահ կամ թագավոր Հայոց եւ Վրաց տիտղոսը: Նրա վերջին տարիների գործունեությունը թաղված է մշուշի մեջ: Հայտնի է միայն, որ նա մահացավ 992 թ.՝ առաջացած տարիքում, եւ թաղվեց Արգինայի կաթողիկեի հյուսիսակողմում: Նա հայոց ամենահաջողակ եւ գործունյա հայրապետներից մեկը եղավ՝ հայ կաթողիկոսների համար օրինակ ծառայելով իր հայրենասիրությամբ, Հայոց եկեղեցին միասնական տեսնելու անհողդողդ կամքով եւ նրա վարդապետությունը ջատագովելու իր անկոտրում վճռականությամբ:

Խաչիկ Ա կաթողիկոսի աթոռակալության շրջանում փայլեցին մի շարք հոգեւոր այրեր, նշանավոր վարդապետներ: Դրանցից մեկն Անձեւացյաց Խոսրով եպիսկոպոսն էր, որից մեզ են հասել պատարագի եւ ժամերգության մեկնությունները: Նա Սահակ Անձեւացու միջնեկ զավակն էր, որը մնացել էր նրա մոտ, իսկ նրա եղբայրները՝ անդրանիկ Հովհաննեսը եւ կրտսեր Գրիգորը, մտել էին Նարեկա վանքը: Նա մահացավ 972-ին իր եպիսկոպոսական նստավայրում: Շատ նշանավոր էր Անանիա Նարեկացին, որը ոչ միայն մեծ հռչակ բերեց Նարեկա վանքին, այլեւ Նարեկա դպրոցի հիմքը դրեց: Գրել է թոնդրակյանների դեմ, որտեղ նա բոլոր հնարավոր եղանակներով անիծում է թոնդրակյաններին: Անանիա Նարեկացին Խոսրով Անձեւացու մտերիմն էր՝ նրա կնոջ հորեղբորորդին եւ զավակների ուսուցիչը: Ժամանակին նրան մեղադրել են Անձեւացուն եւ Հակոբ Սյունեցուն հարելու մեջ: Անանիան մերժել է իր կապը հիշյալ անձանց հետ եւ ցավ է զգացել, որ կաթողիկոսը, նրան լավ ճանաչելով, նրանից այդպիսի թուղթ է պահանջել: Անանիա Նարեկացու գրչին է պատկանում «Հաւատարմատ» աշխատությունը, որ ուղղված էր երկաբնակների դեմ: Հայտնի է, որ նա եւ Ուխտանեսը հանդիպել են տրե ամսի 11-ին՝ կիրակի օրը, Ախուրյանի ափին: Թիվը հայտնի չէ, ուստի այն կարող էր լինել 973-987 թթ. միջոցին: Նրա անունով մակագրված են ճառեր, բայց դժվար է որոշել, թե որ Անանիայի գրչին են դրանք պատկանում: Նա հավանաբար մահացավ Նարեկա վանքում, եւ նրան հաջորդեց Գրիգոր Նարեկացու ավագ եղբայր Հովհաննեսը:

Մյուս վարդապետներից հիշատակության արժանի են Կամրջաձորի առաջնորդներ Հովհաննեսը, Պողիկարպոսը եւ Սամվելը, Հովհաննես Հոռոմոսցին, Սիմոն Խլաձորեցին, Վարդիկ Վանգեցին, Կարմիր Պաղնացին, Մովսես Տարոնեցին, Սարգիս Հնձացին, Ստեփանոս Ցախացքարեցին, Հովհաննես Սանահնեցին, Սիմեոն Հաղբատացին, Հովհաննես Խաչակիր վարդապետը (սրան սպանեցին վրացիները): Թաղված է Բասենի Ակսիգոմս գյուղում, որը նրա անունով կոչվել է Սուրբ Յոհան), Հովսեփ Հնձացի Գերմաքուր վարդապետը, Կիրակոս Գծծակերպ վարդապետը՝ Նիգ գավառի Թեղենյաց վանքից, Երեմիա Թեղենեցին, Սարգիս Աղվան Վայելչաբան վարդապետը, Հովհաննես քահանան եւ ուրիշներ: Սրանց շարքում պետք է դնել Ղեւոնդ վարդապետին (իմա՛ Լեւոն փիլիսոփա), Մեսրոպ Վայոցձորեցին կամ Հողոցմեցին, որ գրել է Ներսես Մեծի պատմությունը:



Հռչակավոր էր Դավիթ Մոկաց եպիսկոպոսը, որը վանք էր հիմնել Ապարանք կոչված վայրում: Նրա գերեզմանը դարձավ ուխտատեղի՝ Մոկաց եւ Կորդվաց աշխարհների հավատացյալների համար: Նրա եղբորորդին էր, հավանաբար, Չափրանիկ Մոկաց իշխանը, որը բյուզանդական ծառայության անցնելով՝ նշանավոր դարձավ որպես զորավար: Դավիթ Մոկաց եպիսկոպոսին հաջորդեց Ստեփանոս եպիսկոպոսը, որը նրա եղբոր թոռն էր: Վասիլ եւ Կոստանդին կայսրները, տեղեկանալով Դավթի գերեզմանի հողի բժշկական զորությանը, Ապարանից վանքին ուղարկեցին Խաչափայտի մի մասը՝ զարդարված ոսկեկուռ ծուլվածքի զարդով: Դրա մեջ այլ մասունքներ եւս դրվեցին, որոնք Դավթի եղբոր որդին, որ Բյուզանդիայում Մանգլավտ անունն էր ստացել, բերեց Մոկք: Այս կապակցությամբ հանդիսավոր տոնախմբություն կատարվեց Ստեփանոս եպիսկոպոսի ղեկավարությամբ եւ Արծրունյաց երեք գահակալների մասնակցությամբ, որոնցից վերջինի՝ Սենեքերիմի տիրույթներում գտնվում էր վանքը: Տոնախմբության կապակցությամբ վերանորոգվեց եկեղեցին, եւ Ապարանից վանքը նշանավոր ուխտատեղիի վերածվեց:

Խաչիկ կաթողիկոսի օրերում պետք է կայանար Մատին Առաքելո վանքի հիմնադրությունը Սասունի Գոմեր գյուղում: Առասպելախառն պատմություն է պահպանվել այն մասին, թե Գոմերի քահանան անիծում է գյուղի տանուտերին եւ անիծելուն պես մահանում է: Եվ քանի որ հանգուցյալ քահանայի անեծքն ուրիշը վերացնել չէր կարող, տանուտերը հասնում է մինչեւ Հռոմ, որպեսզի Պետրոս առաքյալն անեծքն արձակի: Հռոմի հայրապետը եկեղեցական ժողովում որոշում է, որ ուխտավոր տանուտերին երկաթե շղթաներով կապեն եւ թողնեն Պետրոս առաքյալի գերեզմանի մոտ: Եվ եթե նրա երկաթյա շղթաները հրաշքով բացվեն, ուրեմն նա անեծքից ազատվել է: Գիշերը տանուտերը երազ է տեսնում, թե ինչպես Պետրոս եւ Պողոս առաքյալները հանգուցյալ քահանային խնդրում են նրան ներել, սակայն նա չի ներում: Եվ միայն Քրիստոսի հրամանով կապանքները քակվում են, իսկ Հռոմի հայրապետն ու հոգեւոր հայրերը համոզվում են, որ անեծքը վերացված է: Դրանից հետո տանուտերը նշանակվում է առաքյալի գերեզմանի պահապան, եւ յոթ տարի անց նա ատամներով պոկում է Սբ. Պետրոսի ճկույթը: Երկնային նշաններ են հայտնվում, եւ սուրբ քաղաքի հոգեւոր հայրերը Հռոմի հայրապետի հետ միասին որոշում են ճկույթ մատը թողնել հայերին: Տանուտերն էլ վերադառնում է իր հայրենի Գոմեր գյուղը եւ կառուցում Մատին Առաքելո վանքը:

Մի նշանավոր վանք էլ շինվեց Մարմաշենում, որը Մարմարաշեն անունով էլ է հիշվում: Բոլորովին անհասկանալի ձեւով Ղ. Ալիշանը փորձում է վանքի անունը Մարիամաշեն տեսնել: Մարմաշենի վանքը հիմնադրվեց Գրիգոր Պահլավունու որդի Վահրամի կողմից: Պահլավունիները, որ հետագայում մեծապես հռչակվեցին շնորհիվ Գրիգոր Մագիստրոսի եւ այդ տոհմից ընտրված կաթողիկոսների, իրենց համարում էին Գրիգոր Լուսավորչի շառավիղներ, իսկ Շնորհալին իրենց սերված էր համարում պահլավիկներից: Սակայն այդ տեսակետները որեւէ հիմնավորում չեն գտնում սկզբնաղբյուրներում: Ավելի շուտ, ինչպես կարծել են Կոստանյանցն ու Օրմանյանը, Պահլավունիները սերում են Կամսարականներից, որոնք թողնելով իրենց Երասխաձոր գավառը, անցնում են Այրարատի Վարաժնունիք գավառը, որի կենտրոնն էր Բջնին: Թե ինչ հանգամանքներում Կամսարականներն այստեղ վերցրին Պահլավունի անունը, հայտնի չէ, սակայն այստեղ է, որ նրանք հանդես են գալիս որպես գավառատերեր:

**Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
***Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

# ԱՆԱՊԱԿ ԲԱԺԱԿԻ

## ԽՆԴԻՐԸ ՀԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԱՆԴԱՍՏԱՆՈՒՄ

*Սկիզբը՝ էջ 6*

Օրինակ՝ նա մեջբերում է Հովհան Մանդակունու ԻԲ ճառից մեկ հատված, ուր ասվում է. *«Այլ մի՛ հրբեւ ի լոկ հաց հայիցիս, եւ մի՛ իբրեւ զգինի համարիցիս եւ տեսանիցես. զի ոչ տեսանելի է ահաւորութիւն սուրբ խորհրդոյն, այլ իմանալի զօրութիւնս. քանզի ոչ ինչ տեսանելի աւանդեաց մեզ Քրիստոս ի խորհուրդն եւ ի մկրտութիւնն, այլ իմանալի: Ջուր տեսանեմք, այլ աստուածային բանին հաւատամք, որ ասէն, եթէ այս է մարմին իմ եւ արիւն. որ ուտէ ի մարմնոյ իմմէ եւ ըմպէ յարենէ իմմէ, նա յիս բնակեսցէ եւ ես ի նա, եւ ես յարուցից զնա յաւուրն յետնում»* (տե՛ս Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց Հայրապետի ճառք, Վենետիկ, 1860, էջ 168): Գաթրճյանը ենթադրում է, որ ընդօրինակող գրիչն իմաստը փոխելու համար դիտավորյալ կերպով բնագրից զեղչել է հաց եւ գինի բառերը՝ թողնելով միայն ջուր բառը: «Նշանաւոր է *ջուր* բառին խորհրդեան համար մնալը: Եթէ ասիկայ ջնջէր եւ նախընթացները թողուր, կ'անցնէր նենգութիւնն առանց իմացուելու, բայց չէ եղած: Փա՛ռք Տեառն»,- գրում է նա (տե՛ս նույն տեղում, էջ 69): Սակայն վերջինիս հակառակ՝ Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Հ. Վարդան Հացունին, քննության ենթարկելով տվյալ հատվածը, ցույց է տալիս, որ Հովհան Մանդակունին այն վերցրել է Ոսկեբերան Հայրապետի գործից, ուստի զուր է Գաթրճյանի ջանքն այդ մասում ջուր խառնելու վկայություն տեսնել (տե՛ս Ս. Պատարագի օրերն, տեսակք եւ ժամեր Հայ Եկեղեցւոյ մէջ ի Հ. Վարդանայ Հացունւոյ, Վենետիկ, 1899, էջ 11-12, «Լոյս», էջ 611): Նույն այս տեսանկյունից են Ոսկեբերանի խոսքերը մեկնաբանել նաեւ Սսի ժողովականները եւ Գրիգոր Անավարզեցին: *«Նա եւ յիշեալ են եւ մեկնաբանեալ զՅոհաննու Ոսկէ բերանին զայն, որ ի վերայ այն բանի, թէ ոչ արբից ի բերոյ որթոյ, կու ասէ, թէ զայդ ասաց, զի միւս չար հերձուածն արմատաքի խլեսցէ, որ ի սուրբ խորհուրդն ջուր ի կիր արկանեն: Տե՛ս, չի՛ ասել, թէ ընդ գինին ջուր խառնեն, ապա ի սուրբ խորհուրդն ոչ միայն գինի է, թէպէտ գինին եւ հացն նիւթք են խորհրդոյն, որ զՔրիստոսի մարդեղութիւն եւ մահն նշանակէ: Եւ տե՛ս, չի ասել, թէ խառնեն, զի թէ խառնեն, ասէր Ոսկեբերանն, նա վստահի զմերս ճշմարտէր: Բայց ասաց, որ ի կիր արկանեն, որ Քրիստոսի մահուն խորհուրդն ջրով միայն գործեն առանց գինոյ»* (**Գալանոս**, էջ 436-437, **Տէր Աբէլ**, նշվ. աշխ., էջ 83-84, հմմտ. **Աղեքսանդր Վ. Պալճեան**, նշվ. աշխ., էջ 277),- գրում են ժողովականները: *«Եւ այն, զոր ասէ սուրբն Յոհան ի մեկնութիւն Աւետարանին, թէ ոչ արբից ի բերոյ որթոյ, մինչեւ արբից զդա նոր ըստ յարքայութեան հօր իմոյ: Եւ ի վերայ բերէ, թէ զմիւս չար հերձուածն արմատաքի խլեսցէ, որ ի սուրբ խորհուրդն ջուր ի կիր արկանեն: Չայս ոչ վասն այնորիկ ասէ, թէ ընդ գինին ջուր խառնեն հերձուած անուանելով, այլ որ զսուրբ խորհուրդն ջրով միայն կատարէին առանց* գինենոյ: Եւ թէ ընդէ՞ր ոչ յայտնեաց զանուանս այնոցիկ սուրբն Յոհան, նա առ մեզ չէ յայտնի....» ,- գրում է Անավարզեցին («Էջմիածին», 1974, Ժ, էջ 50, հմմտ. նաեւ՝ **Գալանոս**, էջ 463, **Աբէլ քահանայ Օղլուգեան**, նշվ. աշխ., էջ 83-84): Նույն ձեւով են ըմբռնել նաեւ 1316 թ. Ադանայի ժողովականները. *«Գիտասցեն եւ ուսցին, զի վասն ջրամատուցողացն ասէ վարդապետս զայս, զի ոչ ասէ խառնումն ի գինին, այլ արկումն ջրոյ ի խորհուրդն* (**Աղեքսանդր Վ. Պալճեան**, նշվ. աշխ., էջ 287):



Ամփոփելով այս ամենը՝ կարծում ենք, որ ինչ տեսանկյունից էլ քննարկենք եւ վերլուծենք ս. Հովհանի վերոբերյալ խոսքը, պարզ է մեկ բան, որ կրկին խնդիրը մեկնաբանության ծիրում է գտնվում: Այսօր դժվար է ասել, թե իրականում ինչ է նկատի ունեցել սուրբ հայրը՝ այս տողերը շարադրելիս: Գոյություն ունի մեկնաբանության երկու մոտեցում, որոնք թանկ եւ արժեքավոր են յուրաքանչյուր կողմի համար: Կարելի է տարբեր կողմերից եւ տեսանկյուններից վերլուծել եւ քննության ենթարկել Ոսկեբերանի արտահայտությունը: Սակայն միեւնույն ժամանակ հստակ է, որ իրենց վճռական խոսքը պիտի ասեն Ավանդությունը եւ տվյալ Եկեղեցու մոտեցումն այս հարցում: Ուստի այստեղ պարզապես ուզում ենք կրկնել տեր Աբելի խոսքերը. *«Մեր մատենագրության մէջ Ոսկեբերանի «Մատթէի Մեկնութեան» հայերէն թարգմանութիւնը Ոսկեդարեան ընտիր եւ բնագրին հարազատ մի գործ է, եւ մեր Հայրերը մեզ հետաքրքրող այդ տեղը հասկացել են այնպէս բառացի, ինչպէս որ այն ծորել է հեղինակի գրչից»* (**Աբէլ քահանայ Օղլուգեան**, նշվ. աշխ., էջ 85):

*Շարունակելի*

***Տիգրան արկ. ԲԱՂՈՒՄՅԱՆ***

# ՇԵՆՈՒԴԱ Գ — ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

*Սկիզբը՝ էջ 5*

2. «Հայտնության» տեսիլքը տեսած սբ. Հովհաննեսն ասում է. «Ես՝ Հովհաննեսս՝ ձեր եղբայրը եւ նեղության, արքայության ու համբերության մեջ հաղորդակիցը Հիսուս Քրիստոսով, եղա այն կղզում, որ կոչվում է Պատմոս... եւ իմ ետեւում լսեցի մի բարձր ձայն, ինչպես շեփորինը, որն ինձ ասում էր. «Ես եմ Ալֆան եւ Օմեգան, Առաջինն ու Վերջինը... Եվ շրջվեցի, որ տեսնեմ ինձ հետ խոսող ձայնը, եւ շրջվելով՝ տեսա յոթ ոսկյա ճրագարան, իսկ յոթ ճրագարանների մեջտեղում՝ մեկին՝ Մարդու Որդու նման, պճղնավոր պատմուճան հագած...» (Հայտ. Ա 9-13):

Ո՞վ է Այդ մեկը, որ նման է Մարդու Որդուն, եթե ոչ՝ Տեր Հիսուս Քրիստոսը, ով ասաց. «Ես եմ Ալֆան եւ Օմեգան, Առաջինն ու Վերջինը»:

3. Սբ. Հովհաննեսը նույնը դարձյալ հաստատում է՝ ասելով. «Եվ երբ տեսա Նրան, մեռելի պես ընկա Նրա ոտքերի առաջ, Նա Իր աջն Ինձ վրա դրեց եւ ասաց. «Մի՛ վախենա, Ես եմ Սկիզբը եւ Ես եմ Վախճանը: Ես եմ, որ ապրում եմ, եւ Ես եմ Նա, ով մեռավ եւ ահա կենդանի է հավիտյանս. ամեն» (Հայտ. Ա 17-18):

Ո՞վ է Նա, որ ապրում է եւ մեռավ, եթե ոչ՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսը, ով հարություն առավ մեռելների միջից:

4. Նույն միտքն արտահայտվում է նաեւ «Հայտնության» գրքի վերջին գլխում, ուր Տերն ասում է. «Ահա գալիս եմ շուտով, եւ Իմ վարձն Ինձ հետ է՝ հատուցելու յուրաքանչյուրին ըստ նրա գործերի: Ես եմ Ալֆան եւ Օմեգան, Սկիզբն ու Վերջը, Առաջինն ու Վերջինը... Ես՝ Հիսուսս...» (ԻԲ 12-16):

*գ) Ի՞նչ ենք եզրակացնում այս ամենից:*

1. Եսայու գրքում Աստված ասում է. «Ես եմ առաջինը եւ Ես եմ վերջինը» (ԽԸ 12), եւ նույն բառերը բանիցս կրկնվում են «Հայտնության» գրքում. «Ես եմ Ալֆան եւ Օմեգան, Սկիզբն ու Վերջը, Առաջինն ու Վերջինը»: Կարո՞ղ են այս երկու պնդումները համընկնել, եթե չեն վերաբերում նույն մեկին, այսինքն՝ Աստծուն:

2. Տեր Հիսուսն ասում է, որ Ինքն Առաջինն է եւ Ալֆան: Սա նշանակում է, որ Նրանից առաջ ոչ ոք գոյություն չի ունեցել, մի բան, որ չի կարող վերաբերել ուրիշ որեւէ մեկի, եթե ոչ՝ Աստծուն, այլապես Աստված ընդհանրապես գոյություն չէր ունենա, որովհետեւ Առաջինից եւ Ալֆայից առաջ ոչինչ չկա: Տեր Հիսուսի «Ես եմ Առաջինը» խոսքը չի՞ համընկնում Աստծո «Ինձանից առաջ ուրիշ Աստված չի եղել եւ Ինձանից հետո էլ չի լինի» (Ես. ԽԳ 10) խոսքի հետ: Միակ բացատրությունը սրան այն է, որ հիշյալ երկու խոսքն էլ ասված են նույն Մեկի կողմից:

3. Եթե Տեր Հիսուս Քրիստոսն Առաջինն է, ապա ստեղծված չէ, որովհետեւ Նրանից առաջ չկար ոչ ոք, որ Նրան ստեղծեր: Իսկ եթե Նա ստեղծված չէ, ապա հավիտենական է: Ուրեմն՝ Նա Աստված է:

*դ)* Երբ 1953թ. հուլիսին Մենք այս մասին հրապարակեցինք Կիրակնօրյա դպրոցի հանդեսում, Եհովայի վկաների կողմից երկու փորձ եղավ այն հերքելու իրենց «Դիտարան» պարբերականի 1953 թ. նոյեմբերի համարում: Նրանք պնդում էին, որ՝

1 - Նա, ով գալու է (Հայտ. Ա 8), Հայր Աստված է:

2 - Քրիստոսի Առաջինն ու Վերջինը լինելը վերաբերում է միայն որոշ դեպքերի, օրինակ՝ Նրա մահվանն ու հարությանը:

Մենք հանգամանորեն պատասխանեցինք այս երկու կետերին Կիրակնօրյա դպրոցի հանդեսի 1954թ. հունվարի համարում: Այստեղ պատասխանը կներկայացնենք համառոտակի:

1 - Նա, ով գալու է, անկասկած Տեր Հիսուս Քրիստոսն է: Նա գալու է դատելու եւ հատուցելու յուրաքանչյուրին ըստ նրա գործերի (տե՛ս Մատթ. ԻԵ 31-46, ԺԶ 27): «Հայտնության» գրքի վերջին համարն էլ ասում է. «Ամե՛ն: Այո՛, եկ, Տե՛ր Հիսուս» (ԻԲ 20): Տեր Հիսուսն Ինքն էլ ասում է քահանայապետին. «Այսուհետեւ Մարդու Որդուն կտեսնեք Զորության աջ կողմում նստած եւ երկնքի ամպերով եկած» (Մատթ. ԻԶ 64): Եվ այդ ժամանակների նշանների մասին ասում է. «...այդժամ երկրի բոլոր ազգերը կկոծեն: Եվ կտեսնեն Մարդու Որդուն, որ գալիս է երկնքի ամպերի վրա, զորությամբ ու մեծ փառքով: Նա մեծաձայն փողով կուղարկի Իր հրեշտակներին...» (Մատթ. ԻԴ 29-31):

Ուրեմն, եթե Եհովայի վկաներն ասում են, որ Նա, ով գալու է, «Եհովան» է, մինչ աստվածաշնչյան համարները ցույց են տալիս, որ Նա, ով գալու է, Տեր Քրիստոսն է, սա եւս մի ապացույց է, որ Հիսուս Քրիստոսն Աստված է:

Այս ճգնաժամային վիճակից դուրս գալու համար Եհովայի վկաները «Դիտարանի» միեւնույն հոդվածում գրեցին, թե «Եհովան» գալու է Հիսուս Քրիստոսի տեսքով: Սակայն սա չի՞ նշանակում, թե նրանք խոստովանում են, որ Աստված հայտնվել է մարմնով (Ա Տիմ. Գ 16)...

2 - Ինչ վերաբերում է Եհովայի վկաների երկրորդ պնդմանը, թե Քրիստոսի Առաջին եւ Վերջին լինելը վերաբերում է միայն Նրա մահվանն ու հարությանը, ապա սրա պատասխանը հետեւյալն է.

*Մահվան վերաբերյալ:* Տեր Հիսուս Քրիստոսն առաջինը չէր, որ մեռավ, ոչ էլ՝ վերջինը: Միլիոնավոր մարդիկ են մահացել Նրանից առաջ եւ միլիոնավորներ՝ Նրանից հետո:

*Հարության վերաբերյալ:* Թեեւ Քրիստոսն իրականում առաջինն էր, որ մեռավ ու հարություն առավ փառավորյալ մարմնով, սակայն Նա հառնողների մեջ վերջինը չէ, որովհետեւ բոլո՛ր մարդիկ՝ արդար թե մեղավոր, հարություն են առնելու Վերջին Օրը (տե՛ս Հովհ. Ե 28-29):

*Շարունակելի*

***Թարգմանությունը՝ Ս. Ստամբոլցյանի***

# ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄՈՒՄ

Մեծ պահքի կիրակիների ոսկե շղթան իր լրումին հասավ Սբ. Հարության տոնին:

Հավատավոր ժողովուրդն այս տարի առավել աշխուժությամբ մասնակից դարձավ Մեծ պահքի եկեղեցական եւ ժողովրդական ավանդույթներին ու սովորույթներին: Ծաղկազարդին բազմաթիվ վանաձորցիներ Սբ. Աստվածածին եւ Սբ. Սարգիս եկեղեցիներում մասնակցեցին Սուրբ Պատարագին եւ տուն տարան խորհրդանշական ուռենու ճյուղերը: Սակայն այդ օրն առավել նվիրական էր մանուկների համար: Պսակները գլուխներին եւ ուռենու ճյուղերը ձեռքներին՝ մանուկները մտան եկեղեցի, ճյուղերը նվիրեցին հավաքվածներին, ապա քահանաներից օրհնություն ստանալով՝ ցնծությամբ դարձան տուն:



Այսօրինակ ցնծուն ու հանդիսավոր տոնին հաջորդեց Ավագ շաբաթը՝ կարեւորագույնը տարվա շաբաթների մեջ, քանզի այն խորհրդանշում է մեր Տեր Հիսուս Քրիստոսի երկրային կյանքի վերջին շաբաթը: Ավետարանական ընթերցումներով՝ Հիսուսի ուսուցումների ու վարդապետության մասին, Նրա կողմից հաստատված Սուրբ Հաղորդության խորհրդով, Ոտնլվայի արարողությամբ, Խավարման ու Թաղման կարգերով ժողովուրդը հաղորդակից դարձավ Հիսուսի երկրային կյանքի վերջին օրերին: Երիտասարդները մասնակցեցին Ավագ երեքշաբթին խորհրդանշող ավետարանական Տասը կույսերի առակին՝ 5-ը դառնալով «իմաստուն» եւ 5-ը՝ «հիմար»: Մանուկները մասնակից դարձան Ոտնլվայի արարողությանը, որը կատարվեց ձեռամբ Գուգարաց թեմի առաջնորդ Տեր Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի: Եվ ինչպես Աստվածորդին, լվանալով Իր աշակերտների ոտքերը, խոնարհության ու հեզության պատգամ տվեց Իր առաքյալներին, նմանապես եւ այս արարողությունը անմոռաց դաս եղավ այն երեխաների համար, ովքեր ավետարանական խորհուրդն ուսանեցին իրենց հոգեւոր առաջնորդից:

Հավատավոր ժողովրդի համար տխուր ու հոգեցունց էր Խավարման եւ Թաղման կարգերը, երբ Քրիստոսի աշակերտները լքում են իրենց ուսուցչին, իսկ օրեր առաջ Հիսուսին Երուսաղեմի դարպասների մոտ ցնծությամբ դիմավորող մարդիկ ահա խաչում են Նրան:

Շաբաթ երեկոյան արդեն խավարին հաջորդեց լույսը, քանզի «Քրիստոս յարեաւ ի մեռելոց», Իր հարությամբ մահը խորտակելով: Քրիստոսի լույսը խորհրդանշող կանթեղից վառվեցին մեր մոմերը՝ լույս տալով ողջ քաղաքին, մեր տներին ու օջախներին:

Իսկ կիրակի առավոտյան Հայոց եկեցիների զանգերն ի լուր աշխարհի ազդարարեցին մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի հարության լուրը՝ Աստծո տուն հրավիրելով բոլոր հայորդիներին՝ մասնակից եւ հաղորդակից լինելու Հարության Սուրբ Պատարագին: Վանաձորի առաջնորդանիստ Սբ. Աստվածածին եկեղեցում պատարագիչն էր թեմակալ առաջնորդ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանը:

Պատարագի ավարտին արդեն բարի ավանդություն է դարձել եկեղեցու տարվա խաչքավորի կողմից ժողովրդին բաժանել զատկական կարմիր ձու եւ մատաղամիս: Սբ. Աստվածածին եկեղեցու տարվա խաչքավորն է «Սեզամ-Գազ» ՍՊԸ տնօրեն Արմեն Մխոյանը, իսկ Սբ. Սարգիս եկեղեցու խաչքավորը՝ Վանաձորի փոխքաղաքապետ Նորիկ Սարդարյանը:

***Աստղիկ ԱՍՐՅԱՆ***

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան

**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
ք. Վաղարշապատ, ՔԴԿ

**հեռախոս՝**
**(0+31) 54510**
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան
Ստոր. տպագր. 1.4.2005 թ.

**Տպաքանակը՝ 2500**
**Գինը՝ 50 դրամ**